

134

u-88

1025

10 h 8 (h u)
1895

2010

134
Կ-88

ԲԺՇԿԱՊԵՏ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՊՆՈՏԻՍՄ

(L'Hypnotisme)

մասն երկրորդ

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

Հիպնոտիսմը հին զարերում
Գիւսականութիւն և Վախարդութիւն
Արբակութիւն (մարդարկներ, քարոյիչներ)
Օրինակումն կամ Նմանողութիւն
Ամբոխի հողերանութիւնը

№ 2001

(Արտատպած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մ. Գ. Ռոտինեանցի

Типогр. М. Д. Ротинянца, на Гол. пр., д. № 41.

1895

9229-22

134
Q-88
4.

Ա. Յ.

ԲԺՇԿԱՊԵՏ ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՊՆՈՏԻՍՄ

395 27/11/38

1004
18881

(Արտատպած «ՄՈՒՐՃ» ամսագրից)

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան Մ. Դ. Ռոտինյանցի
Типогр. М. Д. Ротинянца, на Го... пр.. д. № 41.
1895

Дозволено Цензурою. Тифлисъ 3 Февраля, 1895 г.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄ

Մեր աչս աշխատութեան առաջին մասում մենք ուսումնասիրեցինք աչն հիպնոսական երևութները, որոնք չարուցում են արեւստական կերպով, աչսինքն. Արեւստական կամ փորձնական Հիպնոտիսմը:

Մենք տեսանք, որ հիպնոսական երևութները վերին աստիճան բազմատեսակ են, նաեւելով հիպնոսական քնի խորութեան: Բաւց եթէ խորը քննելու լինենք աչս երևութները, կը տեսնենք, որ նրանց հիմքը ն եւ լշընչումն է: Ներշնչումն է աչս անհամար երևութներ պատճառը, որոնք նկատուում են Քարացման և գլխատրապէս Քնալածութեան (Սոմնաբուլիամի) մէջ, ներշնչման ուսումնասիրութիւնն է, որ տալիս է մեզ հասարակական կեանքի զարգացման օրէնքների բանալին:

Բնական հիպնոտիսմը ընդգրկում է (ինչպէս մենք ասել ենք) աչն բոլոր հիպնոսական երևութները, որոնք նկատուում են բնականաբար, աչսինքն փորձնական հիպնոտիսմից դուրս:

Սի որոշեալ պրոգրամմի հետեւելու համար, մենք կ'ուսումնասիրենք բնական հիպնոտիսմի խաղաղած դերը մարդկութեան պատմութեան մէջ, և լետոյ մի թուցիկ հալեացք գցելով հիպնոտիսմի վրա արդի հոգեբանութեան, մանկավարժութեան, իրաւաբանութեան տեսակէտներէից, կ'անցնենք «Նմանողութեան» կամ «Ընդօրի նակման» մեծ օրէնքին և «Ամբոխի հոգեբանութեանը» ըստ Սիգելէի:

ԳԼՈՒԽ Ա.

ՀԻՊԵՐՈՏԻՍՄԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ. ՀՆԱԳԱՐԵԱՆ ԳԱ-
ԻԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ԴԻԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԻ ՍՔԱՆՉԱՅ-
ՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:

I. ՀԻՊԵՐՈՏԻՍՄԸ ՀԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ

Պիթիան և օրակույներ, Սիլիները և Պիթանեանները.—Մոդու-
թիւնը և Սախարոթիւնը—Հին դասնութիւնների ծագումը—

Հիպոտոմի երեւութների հետ ծանօթանալով, գիտ-
նականները նկատեցին, որ ազգերի պատմութեան էջերը
լիքն են նոյնաման երեւութներով, որոնք մինչև վերջին
տարիները դադարութեան (միտիցիում) քօղով էին ծած-
կւած:

Հին և մինչև անգամ նոր դարերում նրանց մեծ
մասը ընդունում էին, ինչպէս գերբնական երեւութներ:

Հիպոտոմի հետ ծանօթութիւնները մի նոր, ապա-
ղալ լուսելով լի, մեթոդ է տալիս մեզ պատմութեան եղե-
լութիւնները մեկնելու համար:

Արդէն հին և նոր ազգերի պատմութեան րազմա-
թիւ էջերը լուսարանւած են: Պիթիաները և օրակույ-
ները պարզւած են, մեծ արշաւանքների, մեծ հրաշագոր-
ծութիւնների պատճառները ըմբռնւած են, բիւրաւոր
մտապաշտութիւններ, որոնց շարքումն են և միջնադա-
րեան դիւահարութիւնները, մեկնւած են. իսկ, մարդա-
բան ճարդի շնորհիւ՝ ալսօր Նմանողութեան մեծ օ-
րէնքը ազգերի քաղաքական և հասարակական շարժում-
ների հիմքը ընդունւած:

Այս նպատակը աչքան մեծ է, որ եթէ մեզ չաջող-
ւի նրա մի մասին անգամ հասնելու, մենք չառ երջանիկ
կը լինենք:

Մենք կանգ կ'առնենք պատմական ամենագլխա-
ւոր շրջանների վրա, որոնք լաւ ուսումնասիրւած են
մեզ հետաքրքրող տեսակետից,—աչն է. հնադարեան դա-
ւանութիւնների պատմութեան վրա, միջին դարի հա-
մաճարակ դիւահարութեան և գլխաւորապէս թուղթեան
համար եղած հռչակաւոր դասերի վրա:

Վիշնելով պատմութեան սանդուխքներով մինչև երկ-
րիս հնագոյն դարերի վիշտակները, և օրաւ լոյսով դնե-
լով անցած դարերի մնացորդները, որոնք դեռ գիշերապին
խաւարի մէջն են, մենք մի շարք հրաշքալին անցքեր
ենք տեսնում, անցքեր, որոնք ոչ միայն դարմացնում
էին ամբողջ Սելիպոս, Յունաստան և Լիբիան, այլ և
գրաւում էին բոլոր չեռագալ ազգերի ուշադրութիւնը:
Այս կարող եղելութիւններն են—օրակույների գուշակու-
թիւնները, Գեղեան Ապոլոնի, Գողոնեան Իւպիտերի, որ
Էպիրոսն էր, Ամոնեան Իւպիտերի, որ Լիբիալումն էր,
Բէօտիալի Տրոֆոնիան և շատ Սիւլիների, որոնց գուշա-
կութիւնները ազգերի աչքին անժխտելի ճշմարտութիւն-
ներ էին:

Այս խօսքերը ես քաղում եմ 1818 թ. տպած մի
հազագլխա գրքից «Անդանական մազնխութեան մա-
սին», որը հաղորդեց ինձ, իրան չատուկ սիրելիութիւ.
նով, բժշկապետ Բաբայանը:

Աւրեմն Մեամերի ուսմունքը կենդանական մագնի-
սութեան մասին, որքան էլ սխալ լինէր նրա հիմքը,
դեռ մեր դարի սկզբին լուսարանել էր մի շարք ամենա-
կարեւոր պատմական երեւութների, որոնք մինչև այժմ և
չառ պատմաբանների անհասկանալի են:

Մենք կ'աշխատենք կանգ առնել այս երեւոյթներին
կարեւորագոյնների վրա:

Հիպնոտիսմը չափնի է մարդկութեանը ամենահին
դարերից: Հիպնոտական երեւոյթները նկատուել են ամեն
ժամանակ, նրանք նույն են եղել, ինչ որ հիմի են: Ազ-
գերի պատմութեան մէջ նրա խաղացած դերը անչափելի
է: Բաւական է կարդալ Տարդի (Tarde) գրածքը հաս-
կանալու համար, թէ որքան կարեւոր է այս նոր գիտու-
թեան ուսումնասիրութիւնը մարդկութեան քաղաքական
և հասարակական զարգացման օրէնքները ըմբռնելու
համար:

Ամեն դարերում հիպնոսը մեծ դեր է խաղացել
կրօնական սնապաշտութիւնների արժատանալուն և զար-
դանալուն. բացի այդ նա ընդունուել է, իբրև մի զօրեղ
բուժական միջոց:

Ափսոս, որ մինչև պատմական ժամանակները ճիշտ
տեղեկութիւններ չունենք հիպնոսի մասին:

Կարելի է ենթադրել, որ Ասիայում և Չինաստա-
նում հիպնոտիսմը գործ էր ածուած արդէն զանազան
ախտեր բժշկելու համար:

Եգիպտոսում հիւանդներին ուղարկում էին Մեմփիս,
որտեղ Սեբապիտի տաճարի մէջ քուրմերը քնեցնում էին
և զբանով բժշկում էին նրանց: Գանիլօ Վելանսկու ասե-
լով, Եգիպտոսում պատնած են նշանագրեր, որոնց մէջ
նկարած են երկու մարդ խփապէս նույն դրութեան մէջ,
ինչ դրութեան որ լինում են նրանք հիմի էլ մագնիսե-
լու ժամանակ: Հնդկաստանի ֆակիրները իրանք իրանց
հիպնոսում էին և սքանչացման (էքստազ) մէջ ընկնում,
իրանց քթին նախելով:

Աւելի ընդարձակ տեղեկութիւններ ունենք մենք
Յունաստանում և Հռոմում թագաւորած հիպնոսի մասին:
Հների դաւանութիւնները պահպանում էին գուցէ
մեծ մասամբ հիպնոսի թովչութեան ներքոյ:

Քուրմերը ընդհանրապէս ծանօթ էին այս երեւոյթ-
ներին և կարողանում էին չարուցանել նրանց: Իրանց
գիտութիւնից ի հարկէ օգտուած էին նրանք գոեհիկ ամ-
բոխը միշտ տարակուսանքի և մինչև անգամ սարսափի
մէջ պահելու համար:

Շատ չասուածների մեհեաններում պահուած էին
ներդալին աղջիկներ, կամ կանաչք, որոնք հեշտութիւ-
նով ընկնում էին հիպնոսի մէջ, քուրմերի ներշնչման
ներքոյ, և զանազան գուշակութիւններ անում:

«Պիւթիան, օրինակ, ընդհանրապէս մի ջահիլ ներ-
դալին, դիւրագրգիւ կին էր. երեք օր ծով պահելուց
չետոյ, դալինի պտակը ճակատին, այս բուրմունքից ար-
բեցած, նա, դալինի տերեւները ծամելով, նստում էր
եռոտանու վրա—Գեւիեան մեհեանում: Այս եռոտանին
ծածկւած էր Ապոլլոնի սպանած Պիւթոն օձի կաշիով և
դուած էր մի գետնի պատուածքի վրա, որի խորքից
բարձրանում էին թանձր գոլորշիներ, բերելով իրանց հետ
բնական, կամ գուցէ և արեւոտական, արբեցնող հոտեր:
Երջպատուած քուրմերով, որոնք սպառնում էին, երբ գու-
շակութիւնը ուշանում էր, զանազան ներշնչումներ ստա-
նալով նրանցից, այս ցած ծագումով և տգէտ կինը, իր
զափնու հոտից և օդը լցնող գոլորշիներից թմրած, սկսում
էր շարժել նստած տեղը: Նրա ամբողջ մարմինը դող-
դողում էր, բերանը փրփրոտում էր, մագերը բիզ-բիզ էին
կանգնում:

Ճշերի և ոռնոցի միջից, որոնք իբր թէ գերբնա-
կան ոգու երեւալն էին ազդարարում, քրմուհին մի քանի

չառ ու քիչ հասկանալի խօսքեր էր արտասանում, խօսքեր, որ թեկադրում էին նրան քուրմերը, Գոնէ սրանք էին մեկնում այս անհասկանալի բառերը, առանց ծիծաղելու, ոտանաւորով հաղորդում հարցնողին: Այսպիսով օգինը խաղաղած էր: Ճշմարիտ է, այս պատասխանները չաճախ երկմտական էին. օրինակ, Պիւռոսին տւած պատասխանը՝ *Romanos Pyrrum vincere*, որ թէ նշանակում է, որ նա կը չաղթի Հռովմայեցոյ, և թէ կը չաղթի նրանցից: Ընդ է նմանապէս, որ աչպիսի նիստերից ցնուել խեղճ աղջիկը թուլացած վայր էր ընկնում, կարծես մի մեծ ներդալին դղրդումից ցնուել: Ճիշդ է նաև որ վաղահաս մահը կնքում էր շուտով նրա կեանքը: Բայց ում հոգան էր աչր» ? ¹⁾:

Երբեմն այս ներդալին գրգռումները զարհուրելի դրուժեան մէջ էին գցում այս խեղճ կանանց: Յանկարծ, փրփուրը բերնին, մարմնները չանկուելով, սկսում էին վազվզել չորս կողմ, և բոլոր իրանց շարժումների մէջ արտապաշտում էին խելագարութիւն և կատաղութիւն ²⁾: Պլուտարքը պատմում է, որ մի անգամ վնուկը ալն աստիճան կատաղութեան հասաւ, որ իրանք քուրմերը սարսափի մէջ փախան, իսկ խեղճ կինը մեռաւ սաստիկ կարկամանց մէջ:

Պիւթիան մեծ չատուած Ապոլլոնի վնուկն էր: Նա ամենահեղինակաւորն էր համարւում և նստում էր Իելֆիտում:

Միւս չատուածներն էլ իրանց վնուկներն ունէին, որոնք չալանի էին Սիբիլլա անունով և որոնք գուշակութիւններ էին անում: Ամենահին Սիբիլլան նստում էր

¹⁾ Paul Marin. *l'Hypnotisme théorique et pratique*.

²⁾ Велланский. *Живомый магнетизмъ*.

Էրիթրէում և չալանի էր Էրիթրէացի Սիբիլլա անունով: Բայց սրանից աւելի հուշակաւորը Կումացի Սիբիլլան էր:

Այս գուշակող կանայքն էլ նույնպէս սաստիկ ներդալին, խտերիկ արարածներ էին, և շարունակ ներշնչման ներքոյ էին գտնուում:

Բացի վնած վնուկները, կալին և մի ուրիշ կարգի կանայք, որոնք միջնորդ էին մարդկանց ու աստուծոների մէջ: Սրանք չալանի էին Պիւթոնիստա անունով և կատարում էին ալն դերը հնրերի համար, ինչ դեր որ կատարում են ալժմ Մեդիտմները Սպիրիտների աչքում: Պիւթոնիստաների միջից ամենահուշակաւորը Լնդորեան վնուկն էր, որի քարալըր դեռ ցոյց են տալիս Պալեստինում:

Այս կինը մի օր Սաւուղին երեցնել աւեց Սամուէլի ուրաւականը, որը Սաւուղին վաղահաս մահ գուշակեց ¹⁾: Գուշակութեան ազդեցութեան ներքոյ, այս վերջինը սուրը իր փուր իրեց և դրանով արդարացրեց վնուկի խօսքերը:

Մագուիթիւնը (*magia, magie*) երևի միշտ գոյու. թիւն է ունեցել աղգերի մէջ, իսկ իւր կատարելագործութեան հասել է Հնդկաստանում, այս գաղտնական (միստիկ) երկրում:

Մագուիթիւնը լինում է սպիտակ և սև: Սպիտակ կամ բնական մագուիթիւնը նա է, որը «բնական բայց ամբոխին անչափ միջոցներով առաջացնում է դերբնական կոչւած երևույթներ, իսկ սև մագուիթիւնը իբր թէ դեերի միջոցով չարուցանում է անբնական երևույթներ» ²⁾:

Ազդելով հանդիսականների երեակալութեան վրայ

¹⁾ Յնորական տեսիլ:

²⁾ Littré. *Dictionnaire de la langue française*.

թովշութեան մէջ քցելով նրանց, ալս մոգերը կամ կախարդները ներշնչում էին նրանց զանազան դրական կամ բացասական ցնորքներ:

«Կախարդութիւնը (ВОЛШЕДСТВО, sorcellerie) մոգութեան կրտսեր քույրն է», ասում է Պ. Մարէնը. Կախարդը դաշին է կապել չար ոգիներին, մինչև անգամ սատանայի հետ իր կախարդանքների չաջողութեան համար, չաճախ իր հոգին նրանց ծախելով:

Սակայն ալս երկուսի մէջ մեծ տարբերութիւն կալ: «Մոգութիւնը իր զօրութեան ներքոյ է պահում բնութեան տարրերը, և իր հաճութիւն է ծառայեցնում զերբնական ուժերը և ալլն: Մի խօսքով ալս մի բանաստեղծական ուսմունք է... Նա չի ստրկացնում մարդու հոգին, նրա հրաշքները բարիք են ասում, նա գիպչում է մարդուն միայն բժշկելու համար: Այն ինչ կախարդութիւնը, ընդհակառակ, միշտ չար ոգիներին, նոյն իսկ սատանայի օգնութեան է դիմում միշտ և դրա ծառայութեան գինը ալս կեանքում կենդանի աչրւելն է ¹⁾, իսկ ալն կեանքում չաւիտենական դատապարտութիւնը» (Պոլ Մարէն):

Կախարդի մէջ գերի, սատանաներ են նստած, որոնց օգնութիւնով կախարդը ամեն տեսակ չարութիւններ անելու և ամեն տեսակ վնասներ հասցնելու ընդունակ է: Կախարդութեան խնդիրը աչնքան նշանաւոր է և աչնքան մեծ գեր է խաղացել ազգերի պատմութեան մէջ, որ առանց նրան հասկանալու անկարելի է բացատրել չառ պատմական փաստեր, որոնք մինչև վերջին ժամանակներս հրաշքալիւն քօղով ծածկւած են եղել: Միայն վերջին դարիս հոգեբանական հոսանքը գիտու-

¹⁾ Մենք կը տեսնենք, որ ինկւիզիցիան կախարդներին ողջ-ողջ աչրում էր:

թեան մէջ նոր լուս քցեց ալս օտարոտի երևութների վրա, որոնք չալտնի են միջնադարեան պատմութեան մէջ կախարդութիւն, դիւահարութիւն, սատանայութիւն և ալլն անուններով: Հիստերիա հիւանդութեան ուսումնասիրութիւնը, հոգեկան խանգարումների ծանօթութիւնը և վերջին տասնուհինգ տարւաչ հրաշալի գիւտերը հիպնոտիսմի մէջ մեզ հասկանալի են դարձնում ալսօր աչգ օտարոտի երևութները, վասնորոչ մենք անհրաժեշտ ենք համարում մի համառօտ հալեացք քցել միջին և նոր դարերի դիւահարութեան պատմութեան վրալ:

II ՀԻՊՆՈՏԻՍՄԸ ՄԻՋԻՆ ԵՒ ՆՈՐ ԴԱՐԵՐՈՒՄ

Մարդու դաղափարը երկնային ու երկրային զօրութիւնների մասին: Ճճարի ոգիներով ու չար ոգիներով բռնաւծները:

Ազգերի դաւանութիւնները ամեն տեղ ենթադրում են երկու մեծ ուժեր տիեզերքի մէջ. Աստուծային և սատանային, ուրիշ խօսքերով՝ երկնային ու երկրային: Աչ ուժերը երբեմն միացած են եղել, իսկ չետոյ զանազան պատճառներով բաժանւել են: Աստուծ կործանւել է իր թշնամուն—սատանային, և զահալիւթել է նրան անդունդը: Աստուծ բնութեան բարի զօրութիւնն է, իսկ սատանան—չար: Աստուծ կենտրոնացումն է մարդի հոգեկան բոլոր մաքուր, վսեմ, բարի, առաքինի ձգտումների, իսկ սատանան—չարի, անարդարութեան իղէալացումն է: Աչ ոգիները կանոնաւոր զինւորական կազմակերպութիւն ունեն: Նրանք բաժանւում են զօրաւորների. սրանց վրա հրամանատարներ են կարգւած: Հրեշտակների զատում մենք ճանաչում ենք հրեշտակապետ Գարրիէլին, Սերովբէ և Քերովբէներին և ալլն, իսկ սատանայի զօրքի մէջ մեծ զօրապետներին՝ Բեհեզդէբուդ, Մագոգ Գագոգ, Աղարիկ,

Աստուծէ, Գաբարիմ և ալն իրանց մելիոնաւոր զինուորներով:

Այս զօրապետների երեսակապական պատկերները պատմութիւն պահպանել է:

Մարդ մի օտարտտի զգանք է զգում զէպի աչս հրշաւոր էակները: Միջնադարեան մարդու ֆանտազիան, քանի կարողացել է, զարչելիացրել է զեների մտապատկերները: Ազապէս, Գաբարիմ սատանան ներկայացնում է մի զարչելի ձիւաղ ահագին ականջներով, նրա աջ ուսի վրա երևում է կառուի զլուխ, կրծքից դուրս է ցցւել մի օձի զլուխ, որի բերնից թոյն է կաթում, մի ուրիշ ահագին օձ անցնում է նրա ոտերի արանքով... Աստարտտ ստթալէլը մի թևաւոր հրէշ է, թաղը զլխին, օձը ձեռնն մի օտարտտի գագանի վրա նստած: Հասարակ զինւորներ թիւը 7 միլիոնից աւելի է:

Աստուած ու սատանան անդադար ու լաւիտենական կռւի մէջ են և ալդ կռիւը մարդու հոգու վրա է: Մէկը պաշտպանում է նրան, փրկում է, որ իր մօտ երկինքը տանի ու նրան լաւիտենական երջանկութեան արժանի անի, երկրորդը—ամեն ջանք գործ է դնում, որ խլի ալդ հոգին արքալութիւնից և տանի իր հետ գոխքը: Երկնալին տէրը, որը կարող էր մի չնչով ունշագնիւ չար ոգիներին, համբերում է, որպէս զի մարդը, մաքառելով ու ցաղթող հանդիսանալով չարի զէմ, իրաւամբ արժանանալ գրախօրին, սատանալի գրաւիչ փորձութիւններին չհետեւելով:

Ջարմանալին աչն է, որ աչս ուսմունքը մենք զըտնում ենք մարդկութեան պատմութեան արշալոյսին, և աչնայիսի ազգերի մէջ, որոնք իրար հետ ոչ մի լարաբէրութիւն չեն ունեցել:

Մարդարանական հոգեբանութիւնը բացատրում է

այս հանգամանքը նրանով, որ ալդ դաւանութիւնը միանգամայն համաձայն է մարդու ներքին ինքնազգացողութեանը: Մարդս ամեն տեղ և ամեն ժամանակ իր մէջ զգացել է երկու ոյժ.— մէկը բարի, որը մղում է նրան զէպի առաքինութիւն, միւսը չար, որը նրան գրդում է զէպի չարութիւն: Ճշմարիտ է, բարու ու չարի գաղափարները տարբեր են եղել զանազան պատմական ժամանակներ և զանազան ազգերի մէջ, աչնայս որ աչն, ինչ որ մի տեղ բարոյական և առաքինի է համարւում, մի ուրիշ տեղ կամ մի ուրիշ ժամանակ հակառակն է—սաւկաչն աչս երկու հոգեկան լատկութիւնների մէջ մշտական կռիւ կալ:

Աստուած ու սատանան, դրախտալին ու գոխալին ոյժերը, միևնույն զէնքով չեն կռւում միմեանց հետ: Աչն ինչ Աստուած միմիայն առաքինի ձգտումներ ու բարի մտքեր է ներշնչում մեզ, սատանան ընդհակառակը չար գաղափարներ, վատ լատկութիւններ է չարացանում մեր մէջ: Մարդու մէջ լաւն ու վատը, բարին ու չարը խառն են: Սատանան օգտւում է մարդու աչս վատ ձգտումներով, նրա հոգին գրաւելու համար:

Հների հասկացողութիւնով մարդու մէջ մի գերբնական էակ է նստած,—կամ հրեշտակ կամ դև: Հրեշտակ կրողները իրանց Աստծու քնարածն են համարում, քանի որ հրեշտակը խօսում է նրանց բերանով, երկրորդները ընդհակառակը համոզւած են, որ դրանց մէջ դև է բնակւում և, ինչ չարիք որ գործում են, սատանալի հրամանով են գործում: Հներում բարի հրեշտակներով բռնւածները շատ էին: Հարիւրաւոր մեծ ու փոքր մարգարէներ, զանազան դաւանութիւններ հիմնողներ և ալն ալդպիսի անձեր էին, որոնք համոզւած էին, որ սրբերը, հրեշտակների նրանց միջոցով բարի, առաքինի գաղափարներ

պիտի տարածեն ժողովրդը մէջ և մարդկանց հոգիները փրկեն: Քրիստոսի իղէալական առաքինութեան ուսմունքը և նրա կատարած հրաշագործութիւնները կարողացան թուլացնել այդ չափաւարկումն, խիստ և քանաւոր հիմունքներ լինելով վրա դնելով քրիստոնէական առաքինութիւնը: Սակաւն նրա լուսաւոր ուսմունքը ցաւակցաբար չջնջեց աշխարհիս երեսից մարդու այս օտարոտի գաղափարը:

Չար ուղիներով բռնաւորները մենք կ'անւանենք ընդհանուր անուշով դիւալիսմը, իսկ բարի ուղիներով բռնաւորներին—սքալիսմը և կամ էքստատիկներ: Մենք կ'ուսումնասիրենք նախ Ղիւակրութիւնը, իսկ քետու կը խօսենք Սրբակրութեան կամ Աքանչացման (էքստազ) մասին:

1. ԳԻԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Démonomanie)

Դիւականութեան ծագումն—Դիւակրութեան երկու ձևերը—Վախարդութիւն և դիւահարութիւն Վախարդի գաղիւն սատանայի հետ. սատանայի կնիքը, սատանայի փոշին ու օծանելիքը—Սարքաւ—Վախարդների ցնորքները, Հաւաքական ցնորքներ—Օրինակներ պատմութիւնից:

Դիւակրութիւնը մի պատմաբանի խօսքերով քրիստոնէութեան ուսմունքի պտուղն է: Պատմաբան Միշլէի ասելով «Դիւականութիւնը եկել է զեցու չանցանքն է»: Յիսուսի հրամանները խիստ էին, անողոք էին: մարդս լուսահատութեան մէջ ընկած, (արքայութիւն ժառանգելու դժարութեան պատճառով) նրան պատկերազմ չալանեց և բնականաբար իրան օգնութեան կանչեց խաւարի ուղիները, որոնց չարութիւնը (նրա կարծիքով) Աստուծո զօրութիւնից պակաս չէր:

Դիւականութիւնը հին ժամանակներն էլ գոյութիւն ունէր, սակաւն նա միանգամայն վարակիչ մի հիւանդութիւն դառաւ միջին և նոր դարերում, երբ չանկարծ ամբողջ հասարակութիւններ, ամբողջ երկիրներ սկսեցին դիւակրութեան ենթարկւել:

Բայց ինչ է դիւականութիւնը?

Երբ Աստուծ թողնում է մարդուն, նրա անձի մէջ իսկույն մտնում է սատանան և այդ մարդուն իրան գործիք է շինում ու նրա միջոցով ամեն տեսակ չարագործութիւններ անում: Սատանան կարող է մտնել մարդու մարմնի մէջ երկու կերպ, կամ այդ մարդու կամքով, կամ հակառակ նրա կամքին: Առաջի դէպքում մարդ կ'աշխարհ է դառնում, իսկ երկրորդում — դիւահար կամ ալսալիս:

ԿԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ (Bolshectvo, Sorcellerie)

Հների ասելով, սատանան ամեն տեղ է: Ոչ ոք հաւատի չէ, որ մի օր նրա ճանկը չի ընկնի: Ամենից երկրաշալին այն է, որ դեերը հեշտ կերպարանաւորւում են, երեւելով մարդու կամ իբրեւ մի գեղեցկադէմ երիտասարդ, կամ իբրեւ մի հրաշալի կույս, կամ ձեռները օսկիներով լի ժլատների հոգին գրաւելու համար, կամ թէ չէ մի թշուշուի, մի որ և է կենդանու կերպարանք ընդունելով, խաբում, գրաւում, կորցնում նրանց հոգին, որոնցից Աստուծ հեռացել է: Բայց սատանան ընդհանրապէս երիտասարդի կերպարանքով է երևում կանանց և գրաւում է նրանց կամ անագին հարստութիւններ խոտախալով, կամ սիրահարական չարաբերութիւնների մէջ մտնելով նրանց հետ: Միակ պալման է հնազանդւել նրա ամեն մի ցանկութեանը և, որ գլխաւորն է, հրաժարւել Աստուծուց, հոգով ու մարմնով նրա հլու հպատակը դառնալ: Դեք

միայն հասակաւորներին չէ բռնում, մատաղահաս երեխաները նոյնպէս բռնում են նրանից. կախարչութեան պատմութեան մէջ վիշապակած են 13, մինչև անգամ 8 տարեկան երեխաներ:

Ահա ինչպէս է կատարւում դաշնադրութիւնը ¹⁾, որի զօրութիւնով մի կին կախարչ է դառնում: Սատանան չալանում է ալդ կնոջ, պատմում է նրան իր կեանքը և ասում է իր անունը. Վետո ձեռք դնում է նրա ձեռքին, կամ ճակատին, կամ ականջի ետևին և կամ մի ուրիշ տեղ և անունստե անուն տեղերը բոլորովին անզգալ են դառնում, անպէս որ ալդ տեղերը կարելի է կտրել, աչրել և ալդ կինը ոչինչ չի զգալ:

Այս սատանայի կնիքն է: Անունստե անուն տեղերով արարածը կախարչ է մկրտւած:

Նրբեմն գեղերը գրաւոր դաշն էին կապում: Թուղթը դրւում էր արիւնով, իսկ գեղ իր եղունկը դնում էր վրան ²⁾: Մինչև անգամ պահպանւած մի դաշնագրի վրա, իբր թէ սատանայի եղունկի տեղը աչրւած է: Անունստե խեղճ արարածը ամբողջապէս սատանային է նւիրւած և պարտաւորւում է հրաժարել Աստուծոյ, մինչև անգամ հաջողել նրան, նա սպանում է իր զաւակներին առանց մկրտութեան և ամեն չար բանի համար սատանաներին իրան օգնութիւն կանչում:

Այս ամենի փոխարէն կախարչը սատանայից ստա-

¹⁾ Այս մանրամասնութիւնները ես քաղում եմ մի վերին աստիճան հետաքրքիր գրքից. „Les maladies épidémiques de l'Esprit“ (Հոգեկան վարակիչ հիւանդութիւններ), հեղ. Պօլ Բէնիարի:

²⁾ Անունդից չէ արդեօք հալկական դարձածքը «Սատանի դունկը մէջն է» կամ ան հաջողանքը՝ «Սատանի դունկ»:

նում է չար գործելու զօրութիւն: «Գեղ կախարչին մի տեսակ փոշի է տալիս, որը սա կը գցի իր թշնամու ուտելիքի ու խմելիքի մէջ ու նրան մահ կամ սարսափելի տանջանքներ կ'առաջացնի: Այս փոշին պատրաստւած էր նորածին մանուկների գիակներին, գլխատրապէս նրանց սրտից, կամ թէ չէ մեռածների ոսկորներից, որ ձեռնում էին և խառնում թունաւոր միջատների բերանի փրփուրի հետ» (Պօլ Բէնիար):

Եթէ ալդ փոշուց կախարչը չաղ տար մէկի արտը, հունձը կը չորանար և արտը կը լցւէր օձերով ու որդներով...

Այս կախարչները, որոնք ընդհանրապէս կանաչք են, վերջ ի վերջոյ իրանք էլ ընդունակ են լինում ուրիշ մարդկանց մէջ գեղի մտցնելու և գլխահար շինելու նրանց: Բաւական է, որ կախարչը փշի մէկի երկարին, կամ վզին, — ալս խեղճի մէջ գեղ կը մտնի. բաւական է, որ մի կախարչ մատը մէկի թեխին կպցնի, թեղ կը չորանա և ալն և ալն: Գիւականութեան պատմութեան մէջ շատ գէպքեր կան, որոնք ցոյց են տալիս, թէ կախարչները ալսպիսի գերբնական ուժ ունէին:

Սաբա: Բացի ալս փոշիներից, կախարչները ստանում էին նոյնպէս մի տեսակ օձանելիք (իւղ), որը պատրաստւում էր գիակների ճարպից: Այս իւղը կախարչները քսում էին իրանց մարմնին և գիշերները ցախաւելի պոչը հեծած, թռչում էին — գնում սատանաների խնջոքը, որը չալանի էր Սաբա անունով ¹⁾:

¹⁾ Սարբաւում (կամ Շարաթում) մեծ սատանան ծնած էր իր գահի վրա. նրա գլուխը ու ոտները աչծի էին, նա մի երկար պոչ ունէր և հոլմովի թեղ (летучая мышь): Անտեղ մտնողը պիտի քամականց գլուխ տար սատանային, և հրաժարելով Աստուծոյ, Աստածած-

Կախարդները ցնորքները: Մենք տեսանք, թէ ինչպէս և ինչ պատճառներով ծագեց զիւականութեան գաղափարը: Մենք տեսանք, որ զիւականութիւնը տգիտութեան և հետեաբար սնապաշտութեան արդիւնք էր: Բոլորը համոզւած էին, որ աշխարհը լիքն է չար ոգիներիով, որոնք կարող են տիրապետել մարդկանց և նրանց միջոցով չարութիւններ անել: Տգէտ և, որ զլխաւորն է, զիւրազրգիւ, ներդալին, հիստերիկ կանաչք հաւատում էին աւելի, քան թէ տղամարդիկ: Այս ներդալին արարածները անդադար ներշնչման ներքոյ գտնւելով, աչն աստիճան զրգուման էին հասնում, որ ինքնաներշնչումով ցնորքներ էին ստանում: (տ. Հիպնոտիսմ, մասն առաջին, էջ 59 և հետ.):

Կենդանացնելով իրանց ուշքը զհերի մասին զանազան պատմածքների վրա, այդ ներդալին կանաչք վերջի վերջոյ պարզ տեսնում էին իրանց ցանկացած զինն: Բաւց սարսափելին աչն է, որ իրանց երեակալութեան պտուղը նրանք իբրեւ եղելութիւն էին ընդունում և համոզւած էին, որ տեսել են իսկական սատանալին:

Նից և սրբերից, նւիրէր իրան սատանալին: Այս գիշերին սկսում էր ինչոքը, գարշելի օրգիան սկսում էր: Ուտում էին ամեն տեսակ զգւելի սողուններ, որդեր, անկնունք մեռած երեխաների սրտեր, փաշծաղներ, զիակներ, փտոյ սկսում էր պարը, որին մասնակցում էր նույնպէս սատանան: Այս պարերը զարմանալի անբարոյական պարեր էին: Անուհետեւ սատանան սե փիլին քցած, քամակը տաճարին արած կատարում էր «Ան պատարազը», Քրիստոսի մարմնոյ և արեան փոխարէն առաջարկում էր շաղկամ կամ կարմիր գաղար և ամենք ծագում էին ս. արարողութիւնը: Լուսադէմին լանկարծ բոլորը ցրում էին գիշերալին բուերի նման: (Պ. Բենիար):

Այս համոզմունքը աչնուհետեւ կը դառնալ աչն կանան, որի վրա կը հիւսւեն նրանց բոլոր ցնորքները: Անուհետեւ նրանք կը լսեն սատանաների ձայնը, նրանցից հրաման կը ստանան և նրանց հաջողանքները ու անէծքները կը կրկնեն: Բաւց այդ բաւական չէ. կոյսերը, միսատաններում փակւած կանաչք, սեռական զրգուման մէջ կ'երեակալեն, որ սիրահարական չարաբերութիւններ են ունենում այդ զհերի հետ ու բացարձակ կերպով, առանց քաշելու, ամօթխածութեան զգացմունքը կորցրած, նրանք կը պատմեն, թէ աչս ինչ օրերը, զիշերը աչս ինչ դէպ մտնում է նրանց խուցը և նրանց հետ սիրահարութիւններ անում, կամ կը պատմեն, թէ նրանք գնում են սատանաների խնձուքին, որը Սաբբա է կոչւում, և որ աչնտեղ զարշելի օրգիաներին են մասնակցում:

Դիւականութեան զարերում մարդկանց երեակալութիւնը աչն աստիճան զրգււած էր, որ նրանք ամեն տեղ զհեր, կախարողութիւններ էին տեսնում և եթէ մէկ կ'ին, մէկ ներդալին, հիւանդոտ, հիստերիկ կ'ին, իր ցնորութեան մէջ մի զե տեսնէր կամ սաբբա գնար, այդ կնոջ բարեկամները, ազգականները, ընկերուհիները վարակում էին և նույն ցնորքներն էին ունենում:

Հաւաքական ցնորքներ: Այս «հաւաքական ցնորքների» գիտելիքը մի վերին աստիճանի կարնոր կէտ է, որը մեզ բացատրում է զիւականութեան տարածւելը և շատ ուրիշ երեւոյթներ:

«Եթէ մեծ քանակութիւնով մարդիկ մի համոզմունք ունին, ասում է Լիւրօն, մանաւանդ, եթէ մի և նոյն զգացմունքով են ոգևորւած նրանք, ներգործում են միմեանց վրա և նրանց երեակալութիւնը բոլորքում է մրնչն վերջին աստիճան: Աչն ժամանակ բաւական է որ նրանց միջից մէկը միաչն մի ցնորական տեսիլ ու-

նենաց—և ալդ տեսիլը ամենքի աչքին էլ կ'երևայ: Մինչև այժմ ամենից շատ հաւաքական ցնորքներ է առաջացրել կրօնական զգացմունքը: Չի կարելի չնկատել, որ ալդ ցնորքները նշանաւոր դեր են խաղացել նոր դաւանութիւնների հաստատուելու մէջ: Օրինակ, անհիմն չէ ալն աւանդութիւնը, թէ Մոհամէդը լուսինը երկու մասն արեց և արեգակին ճանապարհից, ետ զարձրեց: Ասում են, որ չնայելով իր կարճ հասակին, նա ամենից բարձր էր երևում: Նրա դէմքը փալում էր լուսով, քարերը, բուսերը և ծառերը խօսում էին նրա հետ և կռահում էին նրան ողջունելու համար: Կենդանիները, մոզէաները, գալիերը ձայն էին տալիս նրան: Իսլամի պատերազմներում և խաչակիրների արշաւանքներում նոյնպէս նկատուելի է հաւաքական ցնորքներ, իբրև արդասիք ընդհանուր գաղափարների և ցանկութիւնների: Սկզբում խաչակիր զինուորները զանազան նշաններ էին տեսնում երկնքում, բայց Ասիայում հրաշքները շատացան: Դորիւլէում իբր թէ սուրբ Գէորգ և ս. Գեմետրիոս մարտիրոսները օգնում էին խաչակիրներին պատերազմի մէջ թըշնամու դէմ: Անտիօքի կուռի մէջ, նոյն մարտիրոսների հրամանով իբր երկնքից մի զրահաւորւած զօրագունդ է իջնում օգնութեան: Երուսաղէմի առման միջոցին զօրքերին երևաց, որ ս. Գէորգը և պաշարման ժամանակ սպանւածներից շատերը գրօշակ էին ամբացնում սուրբ քաղաքի պարիսպների վրա: Յետոյ, երբոր Սալադինը ետ առաւ քաղաքը, Արժանտեօլի արեղաներին երևաց, իբր թէ լուսինը իջաւ գետին և կրկին երկինք բարձրացաւ: Շատ եկեղեցիներում աղօթողների առաջ Գրիստոսի խաչելութիւնը և սրբերի պատկերները արտասուք էին թափում:

Պատմութիւնը լի է ալսպիսի հաւաքական ցնորք-

ներով: Սրանք առաջացնում էին «հաւաքական ներդալին հիւանդութիւններ», որոնք մարդկութեան հոգեբանութեան ամենադարմանալի էպիդոդներն են կազմում:

ԿԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ, ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ

Հաւաքական դիւականութեան պատմութիւնը սկըսում է հռչակաւոր Յովհաննա դ'Արկ կոչւից, որը փրկեց Ֆրանսիան և որին նոյն իսկ Ֆրանսիական հոգեւորականութիւնը մահի է դատապարտում (1431 թ.), աւարկելով, որ կոչւր ալ հրաշքը կատարեց սատանալի օգնութիւնով: Այս զաղրելի ու միևնոյն ժամանակ անմիտ եղեռնապարծութիւնը չէր կարող անհետեւանք մնալ ժամանակակիցների հոգեկան գրութեան վրա: Եւ ճշմարիտ որ, հիասթափումն սարսափելի էր Ալն կոչւր, որի բերանով Աստուածամալըն էր խօսում, որը Մարիամ կոչւի հրամանով էր որ ամբողջ Ֆրանսիան կորըստից փրկեց և խորտակած դահը վերականգնեց, որին բոլորը պաշտում էին իբրև երկնքից առաքւած փրկչուհու, իբրև մի սրբութիւն,— չանկարճ ալս աղջիկը դատապարտւում է բարձրագոյն հոգեւոր իշխանութեան կողմից, իբրև զհապաշտ...! Որքան զօրեղ պէտք է լինէր սատանան, որ ալսպիսի հրաշքներ է գործում և ալսպէս արհամարհում է Աստծու զօրութիւնը!

Այս անարդարութեան ազդեցութիւնը մեծ էր ժամանակակից ողիների վրա: Հինգ տարի չանցաւ ու չանկարճ լուր տարածեց, թէ Վ. Կոպլանտ անգլիացի մեծ թուով կախարդներ են երևացել, որոնք ուտում էին նախ իրանց երեխաներին և չետոյ ուրիշներ: Հազարից աւելի կախարդներ սարսափելի ցնորքների մէջ ընկած խոտովանեցին, թէ մարդու միտ եփում ուտում էին, և կու-

լաղած ինկւիզիցիան հաղարից աւելի կախարդ ենթադրածներ սպանեց: Քրան տարուց չհտու մի նոր համաճարակ տարածեց Արրա քաղաքում:— Կանաչք խոստովանում էին, թէ իրանք չարաբերութիւններ ունին՝ դեւրի հետ և Սաբբա են դնում, չերկնչելով աչն զարհուրելի տանջանքներից և մահից, որոնք սպասում էին նրանց:

Անուհետեւ սկսում են մի շարք նոր վատկիչ ներդաշն հիւանդութիւններ, որոնք չալանի էին միջին դարերում ընդհանուր «կախարդութիւն» կոչումով Ներուպալի ամեն երկրներում: Ամենից զարմանալին են Կաթրէլ մենաստանի էպիդեմիան. այս մենաստանում կոյսերը չանկարծ սկսեցին կատուի նման մաւլ, լալ, վազել, բարձրանալ ծառերի գլուխ և թաւալ տալ գետնի վրա: Կախարդութեան մի ուրիշ նշանաւոր համաճարակ ծագեց Լոմբարդիայում. — նա չալանի է Կոմեան էպիդեմիա անունով:

Գ Ի Ի Ա Հ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մադրիդի դիւանարական համաճարակը.— Լուդէնի ու Լուվիէնի դիւանարութիւնները:

Կախարդը պալման է կապում սատանայի հետ, նա լոծար կամքով իր հոգին ծախում է դեերին. բաւց սատանան կարող է մոնել մարդու մէջ առանց նրա լոծարութեանը, մինչև անգամ հակառակ նրա կամքի: Այս վերջին դէպքում մարդ դառնում է դիւանար, կամ այստեղի հար կամ ըմբռնած դեից (одержимый, possédé):

Դիւանարութիւնը չալանի էր նոյն իսկ Քրիստոսից առաջ: Ռեհանը իր «Յիսուսի կեանքի» մէջ ասում է հետևեալը.

«Ոչ միայն Հրէաստանում, այլ և ամբողջ աշխարհում հաւատում էին, որ դեւերը կարող են տիրել որոշեալ անձերի մարմնին և նրանց իրանց ցանկութեանը հակառակ գործել տալ: Աւետարանի մէջ չաճախ վիշատակում են ապահարներ, որոնց բժշկում էր Յիսուս: Յաճախ չիշում է Ամոդէլի անունը:

Այս նոյն դիւանարութիւնն է, որը սարսափելի համաճարակի ձևով անցաւ Ներուպալի վրայով 16 և 17-որդ դարերում: «Դիւանարութիւնը XVII դարի ցաւն էր, ինչպէս կախարդութիւնը XVI դարին էր, և մեծամտութիւնը մեր դարին» (Բենիար):

Դիւանարութեան առաջին համաճարակը երևաց Մադրիդի մենաստանում: Հիւանդութիւնը սկսեց կոյսերից մէկից, որը չանկարծ սկսեց սարսափելի ճիշեր արձակել, գետին խփել, լալ և անհասկանալի խօսքեր արտասանել:

Նրա բոլոր մկանները սաստիկ ձգձգման մէջ էին ընկնում, աչնպէս որ նա թաւալէր տալիս գետնին, փըրփուրը բերնին, և երբեմն չենւելով միայն զաղաթի ծալրին և կրունկների վրա. նրա ամբողջ մարմնը կամարի ձև էր ընդունում և կախում օդի մէջ: Այս ողորմելի կոյսը չալտարարում էր, թէ Պերեգրինո գեն է նրան տանջողը: Այդ բաւական էր: Մենաստանի միւս կոյսերը նոյն չալան քունում են զանազան դեերից և սկսում են նոյն երևութները ներկայացնել: Կուսանոցը դառնում է դժոխք. — կոյսերը ամբողջ գիշերները մինչև լուս գոռում են, հաչում, մաւում և սարսափելի ձգձգումների մէջ անցկացնում: 1609 թւին, մի գեղեցիկ աղջիկ, Մադրէն Մանդոյ տարիական սէր է տածում գէպի Մարտէլի քահանայ Գոֆրիտն և անձնատուր է լինում նրան: Մադրէնի ծնողները փակում են նրան Ս. Ուրսուլի մենաստանում:

տանը: Աղջիկը չափանում է, թէ Գոֆրիդին կախարդել է նրան: Այս լուկ մեղադրանքի վրա քահանային ալրում են:

Աւելի նշանաւոր էր Լուդէնի համաճարակը (1632 — 1639 թ.) Լուդենում կար մի կուսանոց, որը բաղկացած էր նշանաւոր տիկնանցից և օրտորդներից: Մեռնում է մենաստանի քահանան, արքայ Մուսոն: Մի գիշեր կուսերից մէկը վեր է թռչում անկողնու միջից, ճիշեր է արձակում, զարթեցնում է ամենքին և պատմում է, թէ նրան երևեցաւ արքայ Մուսոնի գիակը, որը մօտեցաւ նրան: Այս բաւական էր: Ինչպէս միշտ, մէկի ցնորքը անցնում է միւսին, լիտոյ երրորդին և աւսպէս ամբողջ մենաստանը հաւաքական ցնորքներ են ունենում և Մուսոնի գիակը երևում է բոլոր կանանց աչքին: Կուսերը զարհուրելի ճիշեր են արձակում, և սկսում են խոստովանել, որ իրանց մէջ դե է մտել: Յանկարծ բոլորն էլ զիւահարւեցին: Դեռն էին Աստարոտ, Բեգեմոտ, Իսակարում, Դազոն, Մազոն և ուրիշները: Իր ցնցումների և ցնորքների մէջ կուսերից մէկը չափանում է, թէ նրան կախարդողը ու նրա մէջ դե մոցնողը Գրանդիէ քահանան է: Այս Գրանդիէն մի գեղեցկագէմ, խելացի տղամարդ էր, որը մեծ համարում ունէր հասարակութեան մէջ: Այդ կինը պնդում էր, թէ Գրանդիէն ամեն գիշեր պատի միջով թափանցում է նրա ննջարանը և սիրահարութիւններ անում նրա հետ: Գրանդիէի բազմաթիւ թշնամիները օգտեցին այս կիսախելագար կնոջ ցնորքներից և կենդանի ալրեցին անմեղ քահանային: Սակաջն Գրանդիէի մահը վերջ չտւեց զիւահարական համաճարակին, որը օրէց օր տարածւում էր երկրի մէջ: Յալիտակումն աչքան սաստիկ էր, որ Գրանդիէին դատապարտող հոգեւորականները, նրան փորձող բժիշկը և ալրող զինուորը — բոլորը զիւահարում են և մեռնում սոսկալի

ցնցումների, տանջանքների մէջ, հասնելով կատարեալ խելագարութեան!

Լուդէնի սոսկալի պատմութիւնը դեռ չէր մոռացւած, երբ Լուվիէի սուրբ Եղիսաբէթի մենաստանին տիրապետում է մի նոր զիւահարութիւն (1642 թ.):

Լուվիէի քահանան, կիսախելագար Պիկարը, ճշգրտաւոր կեանք էր վարում: Կուսերը աշխատում էին իրանց հոգեւոր հօրը նմանել աստածապաշտութեան մէջ: «Նրանք չարաթններով ծոմ էին պահում, ամբողջ գիշերներ աղօթելով էին անցկացնում, տանջում էին իրանց և կիսամերկ ձիւնի մէջ թաւալ էին տալիս»: Հասկանալի է, որ Պիկարի մահը պիտի աւելի ևս բորբոքէր այս հիւանդ կանանց երեակալութիւնը: Նրանք սկսեցին ցնորական տեսիլներ տեսնել: Ստանան Պիկարի դէմքով երևում էր նրանց աչքին և ստիպում էր նրանց սրբապղծութիւններ անել և, ինչպէս արդէն վիշաճ համաճարակումների մէջ, զիւահարները զարչում էին մեռնից, հաջողում էին կրտորդութիւնը և սարսափելի ցնցումների ու ձգձգումների մէջ ընկնում: Ինկլիզիցիան Պիկարի հոտած գիակը հանել է տալիս գերեզմանից ու տոբից քաջ տալով Բուանի փողոցներով ալրում է նրան աչք հրապարակի վրա, որտեղ ալրել էին Օրլէանի կուսին:

Այս զիւահարութիւնները դուրս գեռ շարունակելին, եթէ Լուդովիկ XIV — 1762 թ. վերջ չտար այս անգութ ինկլիզիցիական դատաստանին և պաշտօնապէս չհերքէր զիւականութիւնը:

Բացի այս, XVII դ. երևեցաւ մի նոր տեսակ հիւանդութիւն, որը չափան է Զոմոթրֆիում (Անառնակա նութիւն) անունով: Մարդիկ սկսեցին երեակալել, թէ իրանք դալ, շուն, կատու, բու, աղւէս են դառել: Նրանք չարձակում էին ոչխարների, երկխաների վրա ու խել-

դում էին նրանց: Այս հիւանդներն էլ աշտահար էին կարծւում և պատշաճաւոր պատժի էին ենթարկւում:

ԿԱԽԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՒԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԳԼԽԱՒՈՐ
ՆՇԱՆՆԵՐԸ

Սատանայի կնիքը և նրա բացատրութիւնը: Հիստերիայի երեւթնքը զիւահարութեան մէջ:—Կախարդների խոստովանաքը և ինքնաներշնչումը:—Ինկլիզիցիան և զիւականութիւնը:—Ինկլիզիցիայի հնարած տանջանքները:

Ինչպէս կը տեսնենք ցտուղ, կախարդութիւնը և զիւահարութիւնը մահացու վանցանքներ էին համարւում: Տեսնենք ուրեմն ինչ նշաններով էին ճանաչում դատաւորները կախարդներին:

Նախ և առաջ չպէտք է մոռանալ, որ բաւական էր մէկ կամ երկու մարդու վկայութիւնը, որ կախարդ և զիւահար կարծածներին բանտարկէին, տանջանքների ենթարկէին և վերջը կենդանի ալրէին: Բաւական էր, որ մէկ խեղադար ասէր, թէ այս ինչ մարդը նրան կախարդեց, բաւական էր, որ մի երեխայ ցոյց տար մէկի վրա, իբրեւ իր մօր ու հօր հիւանդութիւնը պատճառողի, կամ նրանց տաւարի մէջ ցաւ գցողի կամ նրանց հունձը փչացնողի վրա:—Այդ ողորմելին ջաղուկ էր քաջտարաւած! Աշուհեմե ալկ երկրում պատահած բոլոր անբախտութիւնները ալկ ենթադրած կախարդին կամ կախարդունէին էին վերագրում: Ում որ զիւայէր նրա մատը—կաթւածահար պիտի լինէր, ում վրա որ հալեացք գցէր—պիտի հիւանդանար, ում վրա որ փչէր—պիտի զիւահարէր!!! Այդ ամբողջ հալածում էր նրան ու խորշում նրանից, մինչև որ ժամանակակից «արդարադատ» ինկլիզիցիան չ'ալրէր նրան:

Բաց ամենամեծ հաստատութիւնը, որ այս իսկ կնիք, կամ տղամարդու մէջ դե է նստած, համարւում էր «սատանայի կնիքը»—այսինքն լիշած անզգալութիւնը ու կախարդունու իրա խոստովանանքը:

Քննենք այս կէտերը՝

1) Ան զգալութիւնը.

Մենք գիտենք այս ուսումնասիրութեան առաջին մասից, որ մարդ կարող է ինքն իրան ներշնչումներ անել, այս է ինքնաներշնչումն (տ. «Մուրճ» 1892 №№ 1 և 2): Եթէ մարդ համոզւած լինի, թէ այս ինչ կինը կախարդուն է և կարող է նրա թեւ կամ ոտը թուլացնել, նա արդէն ինքնաներշնչումով կը թուլանալ, եթէ ալկ կախարդունէին զիւայի նրան: Նոյնը պէտք է ասել և զգացողութեան մասին: Եթէ մէկը համոզւած է, որ նա կախարդւած է, և գիտէ, որ կախարդւածների մարմնի մի մասը անզգալ է լինում, նա երկար իր ուշը մարմնի ալկ մասի վրա կենտրոնացնելուց, վերջ ի վերջոյ կ'անզգալանալ: Երբեմն ալկպիսի անձերը ամբողջ մարմնով անզգալ են դառնում և ալկ ժամանակ նրանք ալկ ևս ոչինչ չեն զգում:

Բացի ինքնաներշնչումից առաջացած անզգալութիւնը, սա նկատւում է թէ մասնաւոր և թէ ընդարձակ կերպով նոյնպէս և Հիստերիա կոչւած ներդալին հիւանդութեան մէջ: Հիստերիկները սատակ ներդալին արարածներ զուով, ի միջի ալկ ներդալին անկանոնութիւնների (զիւարագրութեան, կաթւածահարութիւնների, ոտների, թեւերի թուլութիւններ և ալկն) նկատւում են նոյնպէս և անզգալութիւններ կամ ամբողջ մարմնի կամ մարմնի մի մասի: Այս անզգալութիւնը հիստերիայի նշաններից մէկն է, մի հիւանդական երեւթ է, որը ինկլիզիցիան ընդունում էր, իբրեւ զիւականութեան ապացոյց: Այս «դեի

կնիքը» որոնում էր դատարանի բժիշկը, որը սրածալո փոքրիկ դաշոնով ծակծկում էր դատապարտածի ամբողջ մարմինը մինչև որ գտնէր այդ անզգալ տեղերը: Այս նշանը բաւական էր, որ կախարդին ալքէին. և սարսափելին աչն էր, որ ալգալիս կէտեր միշտ գտնուում էին, որովհետեւ ինքնաներշնչման օրէնքով նրանց մարմինը անզգալնալուում էր այդ փորձի միջոցին, եթէ արդէն անզգալացած չէր, իբրեւ հիստերիկ:

Յաճախ դիւակիրները ամբողջ մարմնով անզգալ էին դառնում, աչնայէս որ երկար շիշեր խրում էին մարմնի մէջ և նրանք ոչինչ չէին զգում: Դիւակիրութեան պատմիչները սարսափով և լիշատում են աչն փառոր, որ երբեմն ամենասոսկալի տանջանքների մէջ կամ խարովի վրա ալդ ողորմելիները ծիծաղում էին, երգում, սուանց ցաւ զգալու:

Նոյն անզգալութիւնը մենք կը գտնենք և կրօնական համաճարակներին մէջ:

Դիւակիրութեան երկրորդ կարգի նշանները աչն բոլոր նեարդալին երեւոթներն էին, որոնք չալտի են հիստերիկ անունով: Սրանք են՝ միանների ձգձգումներ, անդամների քաշքշւելն, քարացումն, բոլոր մարմնամասերի լարումն և անկանոն շարժումները, սքանչացումն և ալլն:

Այս բոլոր ներդալին հիւանդական արտապալուութիւնները առաջանում են մի որեւէ սարսիկ ներդալին զղրղումից, ինչպէս են սարսափ, մեծ կսկիծ, սեռական զրգուումն, զգալարանքների և երեւակալութեան սաստիկ հարւածումն. — վերջապէս ներշնչումից:

Այս բոլոր պալմանները գոլութիւն ունէին դիւականութեան դարերում: Ամբողջ Նւրոպա մի աննկարագրելի սարսափի մէջ էր: Հռոմի Պապը, անհասկանալի

կուրութեան մէջ, ընդունել էր դիւակիրութեան կարեւորութիւնը և խնոկենտիոս IX հրամանագրել էր անխնայ հալածել դիւահարներին: Ամեն երկրներում կրօնական անողոք դատարաններ էին հիմնւած, Յիսուսի անունով ամենաանգութ եղեռնազորութիւններ էին կատարում: Ամեն եկեղեցիներում քարոզներ էին կարդացում սատա: նալի, զեերի զօրութեան մասին, բացատրում էին ժողովրդին կախարգութիւնը և դիւահարութիւնը: Ինչպէս սղէտ ամբոխը անդադար ներշնչման մէջ էր, նա ամեն տեղ զեեր էր տեսնում, ամեն վատ երեւոթ, ամեն ներդալին հիւանդութիւն սատանալի գործ էր համարում և նրա հոգեկան բալոր ուժերը դիւակիրութեան դադալարի վրա կենտրոնացնելով, խեղճ կիւնը ինքնաներշնչումով իրան ևս կախարգած ու դիւահարար էր երեւակալում: Նւ ալդ համոզմունքը աչնքան արմատանում էր նրանց մէջ, որ նրանք ցնորքների մէջ էին ընկնում, տեսնում էին սատանաներին, խօսում էին նրանց հետ, երջանկանում էին նրանց սիրուց... և համոզւած պատմում էին ալս բոլորը իրանց դատաւորներին:

Հետեալքար ժամանակի ընդհանուր տրալմադրութիւնը պատրաստում էր մի սարսափելի ներդալին սերունդ, որին ամենալիւթե գրգռումն անգամ հիստերիալի մէջ էր քցում:

Հիմալ երեւակալեցէք, որ ալսպէս տրամադրւած մարդկանցից (որ աւելի չաճալ էր պատահում՝ կանանցից) մէկը բանտարկւում է և ինկլիզիցիալի առալ բերւում: Ալդ անձը համոզւած է, որ նա կորած է, որ ինկլիզիցալի ճանկերից անհնար է պրծնել! Ինչ զարմանք, եթէ ալդ խեղճը ներդալին ցնցումներ ունենալ և ներկալացնի վերեւ վիշած բոլոր հիստերիկ զրութիւնները! Ինչ աւելի սարսափելի բան կար աչն ժամանակ մար-

դուս համար քան ինկւիզիցիան և ինչը կարող էր աւելի մեծ դրդումն գործել նրա ներդաշին սխտեմի մէջ, քան ինկւիզիցիական տանջանքների պերսպեկտիւրը...!

Համաճարակ զիւականութիւնների մէջ մէկի ներդաշնութիւնը անցնում էր ամբողջ մենաստանին և հիստերիկ երևութները ընդհանուր էին դառնում. վերև վաճած զիւահարութեան համաճարակները ժամանակ զերից բռնւածները ամենազարմանալի երևութներ են ներկայացնում՝ մարմնի ը ն դ ո ս տ ու մ ն եր ու վ, անդամների կարկամումներով, իրանց անդաշտութիւններով և ցնորքներով։ Այս մի խառնուրդ է քարացման, սոնամբուլիսմի և թովչութեան երևութների, որոնց միանում են և հիստերիկական կարկամումներ։ Այժմեան զիտութիւնը այս երևութները բացատրում է հիպնոսի օրէնքներով, և արդարադատութիւնը այդ երևութները ներկայացնող անձերին ուղարկում է հիւանդանոց, իսկ մեր պատմագրած ժամանակը աղպլիսիներին կենդանի աչրում էին, իբրև զիւականների...։

2) Երկրորդ անցերքելի տպացույցը, թէ այս ինչ անձն կախարդ է և զելի հետ չարաբերութիւններ ունի, համարւում էր զո հ ի խ ո ս տ ու վ ա ն ա ն քը։ Այն, հազարաւոր մարդիկ, գլխաւորապէս կանաչք, իրանք պատմում էին, թէ չարաբերութիւններ ունեն այս ինչ զելի հետ, թէ երեխաների զիւակներ են հանում գերեզմաններից ու ուտում, թէ այս ինչ օրերը դնում են Սարբա, այսինքն զելերի ժողովարանը և աշտեղ պոռնկանում քաջքերի հետ. պնդում էին, թէ այս ինչ անբախտութիւնը, որը հասել է երկրին, այս երաշտութիւնը, այս հիւանդութիւնը և այլն — նրանց գործն է։ Այն, առանց երկնչելու իրանց սպասող սարսափելի մահից, նրանք խոստովանում էին, թէ նրանց մէջ աչն ինչ զեն է նստած, և կուրացած դատարները հաւատում էին ու սպանում այդ մարդկանց։

Արկնում ենք՝ հազարաւոր մարդիկ, գլխաւորապէս (համարեա բոլորը) կանաչք, իրանք իրանց մահի էին դատապարտում իրանց խոստովանանքով։ Մենք արդէն բացաղբել ենք այս երևութը, որը նուազէս ներշնչման և ինքնաներշնչման հետեանք է։

Տ Ա Ն Զ Ա Ն Ք Ն Ե Ր Ը

Եթէ մեղադրւածը չէր խոստովանում, աչն ժամանակ կրօնական դատարանը, (ինկւիզիցիան) զարհուրելի տանջանքների էր մատնում նրան և զուով խոստովանել տալիս աչն լանցանքները, որոնց մէջ նա անմեղ էր։ Դատաստանական բարբառով այդ անւանում էր փ ո թ թ ի ե ն թ ա ռ կ ե լ։ Կար ջրի փորձ, դաշոյնի փորձ, խալանական կոշիկների փորձ, փաշտէ ձիւս փորձ, և այլն և այլն։

Այս տանջանքները, որոնք ինկւիզիցիաի արդարութեան գործիք էին, արձանագրւած են և մանրամասն նկարագրւած են պատմութեան էջերում արեան տառերով։ Միաչն անսանձ կատաղութիւնը և վրէժը երեակաւական սատանալի դէմ, միաչն կաթոլիկ կղերի անհուն սգիտութիւնը և զարմանալի անդթութիւնը կարող էր այս աստիճան կատարելագործութեան հասցնել մարդու տանջելու հնարները, ինկւիզիցիաի պատմութիւնը թերլիս մարդ մի օտարոտի ապշութեան մէջ է ընկնում, նրա ուղեղը հրաժարւում է հաւատալ այս զժոխալին սոսկութիւններին. իսկ երբ մարդ աշխատում է երեակալեւ անգամ տանջանքի դատապարտածներին՝ մի ներդաշին ցնցում է զգում նա և սառսուռ է անցնում նրա ողնաշարի վրայով... Ներոտի և Կալիգուլաի խեղաքար կատաղութիւնը, Արեւելեան բռնակալների անխղճութիւնը աւելի դարձուրելի տանջանքներ չեն հնարել, քան թէ «Բրիտտոսի դատաստանը»։

Անկարելի է թւել անգամ ալս տանջանքի միջոցները:

Տանջանքները սկսուած էին նրանով, որ տկժորացնուած էին կախարդ կարծւածներին ու դաշտնով ծակուած նրա մարմինը, մինչև որ «տատանալի կնիքը» կը դառնէին, ալսինքն անդգալ տեղերը: Ամենակարեոր փորձը «Սպական կոշիկները» փորձն էր: Դատապարտուածի ոտը սեղմուած էին կամ երկու սղոցների, կամ երկու տախտակների մէջ, որոնք ամրացնուած էին պարանով և վետոյ ալս տախտակների և ոտի արանքը չիւեր (խթան) էին խրուած, մինչև որ ոտը տախտականուած էր և ջախջախուած ոտկորի միջից սակրուղեղը դուրս ցատկուած խեղճ Ուրբէն Գրանդիէի երկու ոտերը աջնալէս ջախջախեցին, որ «նրանք կախ էին ընկել փալատինման, ոտկորի կտորները դուրս էին ցատկուած ամեն կողմից»: Գահիճը հրաժարեց չարունակել, ալս ժամանակ Գրանդիէի թշնամի կապուցիները փիլոնները քշեցին և ահագին չաքուծներով սկսեցին նոր չւեր խրել նրա ոտերի մէջ:

Եթէ կախարդը դարձեալ չէր ուզուած խոստովանուել, նրան ձեռներից կախուած էին օճորքից, ոտերին քարեր կապուած, լետոյ վալը էին բերուած և սարսափելի կերպով ծեծուած էին մինչև որ խոստովանուէր: Եթէ ալ էլ չէր ազդուած, նրան պարաններով բարձրացնուած էին վեր և չանկարծ վալը գցուած, կրկնելով ալ տանջանքը մինչև խոստովանուելը: Նրբեմն նստեցնուած էին փալտէ ձիան սուրանկիւն մէջքին, ոտներից ծանրութիւններ կախելով: Սուրանկիւնը կամաց կամաց մտնուած էր մարմնի մէջ և կիսուած նրան: Մի 13 տարեկան աղջկալ ալս տանջանքին ենթարկեցին, և լետոյ կենդանի ալսեցին: Նրբեմն կախարդին կապուած էին աթոռից և ոտերը կրակի մէջ դնուած, կամ «վզնոց» էին սեղմուած շէնքին (ալս փալտէ

վզնոց էր, որի վրա մեխեր էին ամրացրած, ալս մեխերը մտնուած էին վիզը): Անգլիալի թագաւոր Յակոբ I-ը իր ձեռով փալտեր էր խրուած մեղադրուածի եղունկների տակը: Շատերին ուղղակի գցուած էին ջուրը, — եթէ անմեղ էր՝ պէտք է խեղդուէր, իսկ եթէ չէր խեղդուած, մեղաւոր էր և նրան ալսուած էին: Սարսափելի տանջանքներից մէկն էլ ալս էր, որ արգելուած էին քնել:

Հասկանալի է, որ շատերը ալս սոսկալի «փորձերի» մէջ խոստովանուած էին չործած չանցանքներ, որպէս զի ժամ առաջ ալսին նրանց և վերջ տրելի ալս տանջանքներին: Կալին և ալսալիսներ, որոնք մինչև վերջին շունչը գոռուած էին թէ արդար են, ինչպէս Գրանդիէն: Իսկ կալին և ալսալիսներ, որոնք չափշտակման մէջ էին ընկնուած, և տանջանքների մէջ, անդգալ դառած, իրանց ցնորքներն էին պատմուած, իրանց սիրած զւի հետ էին խօսուած...

ԷՔՉՈՐՅԻՍՄ ԿԱՄ ԳԻԻԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Նրբ գիւահարութիւնը վարակիչ հիւանդութեան ձև էր ընդունուած, հոգեորականները, նախ քան խարովներ կանգնեցնէին, աշխատուած էին դուրս խրկել դներին «բռնւածների» մարմնի միջից:

Ալս կոչուած էր էքլորցիսմ (заклинание), որը կարելի է գիւահահանութիւն բառով թարգմանել:

Ռենանի ասելով, հին աշխարհում էքլորցիսմը նույն չափ կանոնաւոր արհեստ էր համարուած, ինչ որ էր բժշկականութիւնը («Յխուսի կեանքը»):

Գիւահանութեան դարերում չալանի էքլորցիստներ կալին: Սրանք բարձրաստիճան հոգեորականներ էին: Հալր Յովսէփի, Ս. Իգնատիոսի և Ս. Մարտինի անուն-

ները շատ չափոնի էին: Ռուբենսի և Յորդանսի վրձինները անմահացրել են այս երկու վերջին դիւանաների կատարած հրաշքները:

Այս ծէսը կատարուում էր մեծ փառաբանութիւնով:

Յաճախ այս ծէսը կատարուում էր տաճարներում, ուր բերում էին դիւանարները: Գիւահանը նախ աղօթներ էր կարդում, պատարագ մատուցանում, չետոյ հրամայում էր սատանային դուրս գալ բռնաձիւ մարմնից և խոնարհիլ Աստծու ու սուրբ մեռոնի առաջ: Աղպիտի հրամաններ կրկնում էին, մինչև որ դիւահարը կամ կախարդը չչոքէին, չղջալին և չպաշտէին Աստծուն: Բայց ցաւակցաբար չաճախ այդ չէր չաղուում, ընդհակառակը դիւահարը սարսափելի ցնցումներ, կարկամումներ էր ունենում, վաչք էր ընկնում գետին և պտտոյներ էր աճում, թքում էր հաղորդութեան վրա, հաչոյում էր Ս. Ներսիսըութիւնը, և, մի խօսքով, սաստիկ ներդալին դըրդումից ընկնում էր հիստերիաի մէջ:

Այս երեւոյթները աչն ժամանակները դեկն էին վերադրում,—դեկն էր սրբապղծում, դեկն էր գետին գլորում իր զոհին և ստիպում նրան հաչոյել սրբութիւնները, դեկն էր անղղալ դարձնում կախարդին և այլն:

Այսպէս դիւահանութեան անմիտ ծէսը չէր հասնում իր նպատակին, այլ ընդհակառակը աւելի սաստիկ ներդալին դղրդում էր առաջացնում: Սակայն այդ ծէսը ունէր և լաւ հետեանքներ: Հասկանալի է, ի հարկէ, որ աչն դիւահարները, որոնք հաւատով դիմում էին տաճար և դիւահանութեան ենթարկւում, սրանք (ինքնաներշնչման զօրութիւնով) կարող էին բժշկուել:

Առաջ բերենք մի դէպք դիւահանութեան մասին մի գաղափար տալու համար:

«Հալը Սիւրէնը մի դիւահար կոչի մայրեց մատուռ: Գիւահարը հաչոյեանքի էր անում: Սիւրէնը հրամայեց կապել նրան աթոռից և, մի քանի աղօթքներ ասելուց չետոյ, հրամայեց դե խաակարումին երկրպագել Յիսուս-Մանկան: Գեը հրաժարեց, սոսկալի անէծքներ թափելով: Աչն ժամանակ Սիւրէնը հրամայեց երգել Magnificat, և «խառք Հօր և Որդոյ»-ի ժամանակ այդ խեղճ կինը, որի սիրտը ճշմարիտ ու լիքն էր չար ոգիներով, սկսեց հաչոյել այդ ամենը:

Եւ նա աւելի եւս կատաղի կերպով շարունակեց իր հաչոյեանքը: Հալը Սիւրէնը կրկին հրամայեց խաակարումին երկրպագել Յիսուսին և ներողութիւն խնդրել թէ Յիսուս-Մանուկից և թէ Ս. Կոչից իր արտասանած հաչոյեանքների համար: Խաակարումը չհնազանդեց: Փորձը շարունակում էր. աչն ժամանակ կոչը աչնալիս ջգաձգութեան մէջ ընկաւ, որ ստիպւեցան արձակել նրա կապերը: Այժմ բոլորը կարծում էին թէ դեը սանձաձ է, բայց խաակարումը դեը չանկարձ գետին քցեց խեղճ կնոջ և հաչոյեց սրբութիւնները: Գիւահանը հրամայեց, որ նա օձի նման թաւալի դետնի վրա և երեք անգամ համբուրի մատուռի լատակը, ներողութիւն աղերսելով Աստածածնից, բայց նա չէր հպատակւում, մինչև որ սկսեցին շարականները: Աչն ժամանակ դեը սկսեց ձախձուել, ծամծուել և սողալ: Նա մօտեցաւ մատուռի դռան և, աճալին սե լեզուն հանած, սկսեց քարէ լատակը լիզել, գարշելի դէմքը ծռմուտելով, ոռնալով, սարսափելի կարկամման մէջ: Նոյնը արեց նա տաճարի առաջ, իսկ չետոյ ուղղեց, սակայն չոքած մնալով, և սկսեց հպարտ իր չուրջը նալել, կարծես ուզում էր ասել, թէ չի կամենում վաչք գալ ալստեղից: Բայց դիւահանը, սուրբ Հաղորդութիւնը ձեռին, հրամայեց նրան պատասխանել:

Այն ժամանակ նրա դէմքը ալանդակեց և սարսափելի դառաւ ու լուեց մի ուժգին ձայն, որը կարծես կրճքի խորքերից էր դուրս գալիս. «Նրկնի և երկրի թագուհի, ներքի ինձ»:

Այս մի հիանալի նկարագիր է այն ներքին կուսին, որը կատարում էր արեղալից ստացած նոր ներշնչման և հին ինքնաներշնչման մէջ քանի որ մենք տեսանք, որ զիւականութիւնը ինքնաներշնչման պտուղ է): Այս կուսի մէջ խեղճ կոյսը ընկնում է խտերիկալի մէջ մինչև որ էքզորցիսմը, այս նոր ձևի ներշնչումն, չաղթող է հանդիսանում:

ԳԻՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՓԸ

«Տանջանքներից չիտոյ դատաստանը իր վճիռը տալիս էր: Պատիժը դանադան էր: Նրբեմն, երբ ոչ մի փաստ չկար, կախարդուհուն արստրում էին, երբեմն էլ, բայց շատ սակաւ—գլխատում: Եղել են դէպքեր, որ նրան զցել են եռացող ջրի մէջ: Իսկ ընդհանրապէս կախարդներին աչրում էին, կամ նրանց խեղտելուց չիտոյ, կամ կենդանի: Մի քանի դէպքերում նրանց աչրում էին մեղմ կրակով, որպէս զի տանջանքները երկար տեսն: Մի քանի կախարդ կանաչք կենդանի թաղւեցան: Վալանսիենում մի 15 տարեկան աղջկաջ, կախարդութեան համար, կենդանի թաղում էին. խեղճի ճշերը աչքան սարսափելի էին, որ գահիճի ուշքը գնաց և նա հրաժարեց «գործը» շարունակել: Այն ժամանակ անվրդով դատաւորը հրամայեց վերջացնել: Յաճախ կախարդներին կապում էին սալի տակը և քաշելով գետնի վրա ջարդած, քարերին դիպելով, ցեխով ու թոզով ծածկւած հասցնում էին նրանց մահաւան տեղը» (P. Regnard):

Բայց միթէ հնարաւոր է թել աճգամ աչն բոլոր սոսկութիւնները, որոնք կատարում էին «Սուրբ դատարանի» ձեռով: Գերեզմանից դիակներ էին հանում և աչրում, որպէս զի սպանեն նրանց մէջ զեռ ապրող ստանալին:

1607-ին Կատալոնիալի զիւականութեան ժամանակ 30 հոգի կենդանի աչրեցին: Լոմբարդիալի համաճարակի ժամանակ աչրում էին տարեկան 1000 ից աւելի կախարդներ. Սափոյում աչրում են 80 կախարդ, Տուլուզում 400, Ալինիոնում նոյնքան: Գատաւոր Բեմին 900 կախարդ և զիւհար է աչրել տալիս Լոտրինգիալում, չալտնի Բոնէն՝ 600: Բերրիում մի օրւալ մէջ 21 կախարդ աչրեցին...

Պատմաբան Միշլէն ասում է:

«Նրբէք ալալիսի կոտորած չի եղել: Այլ չեմ խօսում իսպանիալի մասին, որտեղ մաւրը և հրէան բոլորը կախարդ էին համարում, Տրեւում 7000 մարդ և կին են աչրում, Ժընէւում երեք ամուալ միջոցում—500, Վալուցբուրգում—800 համարեա խմբով, 1500 Բամբերգում: Բանը աչնտեղն է հասնում, որ նոյն իսկ Ֆերդինանդ II, աչս կրօնամուլ և անդութ ինքնակալը, ստիպւած եղաւ սանձել իր հոգևորականներին, որպէս զի նրանք չ'աչրեն բոլոր իր հպատակներին»: Առաջ բերելով աչս սողերը Պ. Մարէնը աւելացնում է «Փրանսիալում 17 դարի սկզբին աչրածների թիւը երեք հարիւր հազարից պակաս էր»:

Բենիարը իրաւունք ունի ասելու: որ ոչ մի պատեւազմ աչնքան զո՜ չտարաւ, ինչքան ինկւիզիցիան: Այս կատաղի կոտորածի մէջ չէին խնայում ոչ կոլերին, ոչ անդամալոյճներին, ոչ ձերերին, ոչ մանուկներին: «Գատալարտաճների թւում գանւում էին մեծ քանակութիւն:

Տոմ Երեխաներ, որոնց մասին Բոնէն ասում է, թէ աղ-
պիսի փոքրերին չպէտք է կենդանի աչրել, ալ վաղօրօք
խեղտել նրանց, երբ կը սկսեն զգալ կրակի զօրութիւնը
(Բենիար): Այս խեղտելը մի առանձին խնամք էր հա-
մարում: Գատաւորները վճռել էին խեղտել Գրանդիէին
աչրելոց առաջ, բայց երբ խարուկի բոցերը սկսեցին
շրջապատել նրան, դաժիճը չկարողացաւ կատարել դա-
տարանի հրամանը, որովհետեւ խեղճի թշնամիները պա-
րանը կապ էին զցել: «Մի քանի րոպէի մէջ, ասում է
պատմաբանը, բոցը լափեց Գրանդիէի շապիկը և կարելի
էր տեսնել նրա մարմնի կարկամումն բոցերի մէջ»:

Այս կամեցաւ մի հաւաք գաղափար տալ աչն հիպ-
նոտական բարդ երեւութի մասին, որը չափունի է Գիւակա-
նութեան անունով: Այս մի վարակիչ հիւանդութիւն էր,
ներշնչումից կամ ինքնաներշնչումից առաջացած, որը
դարերի ընթացքում սարսափի մէջ պահեց ամբողջ Եւ-
րոպան, սարսափ սատանալից, սարսափ ինկիլիդիալի
տանջանքներից:

Բայց ուսումնասիրելով այս տխուր պատմութիւնը,
մարդ միւս կողմից նոյնպէս ապշում է և սարսափում Եւ-
րոպայի կառավարիչների, զարգացած հոգևորականու-
թեան հիւանդական կատաղութեան վրա, որը ոչ միայն
մեռցրել էր նրանց մէջ խիղճը, ալ և խել էր նրանցից
բանականութիւնը, նրանց արիւն թափող մի կաղապար
զարձնելով:

Անտարակոյս այս էլ նոյն աստիճանի հիպնոտական
հիւանդութիւն էր, ինչ որ էր գիւակրութիւնը, և նոյն-
չափ արժանի էր ուսումնասիրութեան հիպնոտիսմի տե-
սակէտից:

2. ՍՐԵԱԿՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԷՔՍՍՁ

Սրբակրութիւն և գիւակրութիւն—Սրբակիրների պատմու-
թիւնը—Ս. Թերեզան և ուրիշները—Նրանց ցնորական տեսիլ-
ները—Նրանց հոգեբանութիւնը—Կեղծ մարգարէներ և քարո-
զիչներ. Լազարետտին և ուրիշները—Սրբակրութեան համաճա-
բակ ներքւ.—Քարոզչութեան համաճարակներ:—Էքստազ և նրա
երեւթները:

Սրբակրութիւնը գիւակրութեան հակառակն է:
Գիւակրները չար ոգիների զոհերն են, «չար ոգիներով
բռնաճններն են», իսկ Սրբակիրները ընդհակառակը «բռն-
ւած են բարի ոգիներով»: Այս վերջինների մէջ մի որ և է
սուրբ, մի հրեշտակ, կամ նոյն իսկ Քրիստոս, Աստուածա-
ծին և Աստուած են նստած: Սրանք չափունի են նոյնպէս
«կրօնական էքստատիկներ» անունով: Այսպէս, սրբա-
կրութեան (կամ էքստազի) և գիւակրութեան ծագման
մէջ մի հիմնական նմանութիւն կալ,—այն որ երկուսն
էլ հետեանք են ներշնչման կամ, աւելի ճիշտ ասած, ինք-
նաներշնչման, աչսինքն, առաջանում են ուղեղի և ներ-
դերի սատարիկ զրգուումից, մտքի չափազանց կենտրոնա-
ցումից մի որ և է գաղափարի, մի որ և է մտապատկերի
վրա. երկուսն էլ երբեմն ծագում են մի պատահական գիպ-
ւածքից, որը հարւածում է մարդու երեակալութիւնը:

Նրկումն էլ չափշտակումն են, ideé-fixe են, մոլու-
թիւններ են: Միայն այս չափշտակման, մոլութեան
առարկաները տարբեր են: Մէկը չափշտակում է դեռով,
միւսը սրբով,—մէկը երեակալում է, որ նրա մէջ սա-
տանալէ նստած, միւսը հրեշտակ,—մէկը իրան չար ոգուն
է նւիրել, միւսը բարուն:

Սրբակրութեան հիմնաքարը կազմում են կրօնական
ցնորքներ, աչն ինչ գիւակրութեան մէջ ցնորական տե-
սիւնները սատանալական էին:

ՍՐԲԱԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՅՆՈՐԱԿԱՆ ՏԵՍԻԼՆԵՐԸ

Սրբակրութիւնը (գիւակրութեան պէս) լինում է եղական կամ համաճարակ (էպիդեմիական)։ Պատմութիւնը արձանագրել է մի շարք սրբակիրների անուններ, որոնցից ամենահռչակաւորներն են Սբ. Թերեզան, Մարիա գելա Անջելա, Աննա Կաթերինա Հեմմերիք, Մարգարիտա Ալակոք, քահանայ Լիօն, Ջովաննի գելլա Վերնիա և ուրիշները։ Այս բոլորը և շատ ուրիշները համոզւած էին, թէ իրանք ւարաբերութիւն ունին սրբերի, նոյն իսկ Քրիստոսի, Մարիամ կոյսի և Աստծու հետ։ Յիսուս, Աստած, Մարիամ կոյսը երևում էին նրանց աչքին, կամ ցոյց էին տալիս նրանց իրանց ձեռք, ղէմք, ոտը և ալին։ Յաճախ խրախուսում էին նրանց և միութարում, երկնային աննկարագրելի չղճմունք ու երջանկութիւն ազդելով։

Կենտրոնացնելով իրանց մտաւոր բոլոր ուժերը մի ուր և է կրօնական մտքի վրա, այս կրօնական մոլիւնները զարմանալի ճոխ և բարդ ցնորքներ էին ունենում։

Թերեզան, որին կաթոլիկների եկեղեցին սրբերի շարքն է դասել, մի կրօնամոլ ընտանիքի զաւակ էր, և զեռ մանկութեան հասակից իրան սուրբ էր Քրիստոսի պաշտմանը։ Նրա առաջին ցնորքը—լսողական ցնորք էր, երբ նա լսեց երկնքի ձայնը. «Աս ալ ևս չեմ կամենում, որ դու մարդկանց հետ խօսես, պիտի խօսես միմիայն հրեշտակների հետ»։ Մի քիչ քննել աղօթելիս նա տեսնում է Աստծու ձեռները, իսկ մի քանի օրից քննել Աստած երեւցնում է նրան իր աստածապետ ղէմքը։ «Մի օր սուրբ Պողոսի տօնին, ու պատարագի ժամանակ, պատմում է Թերեզան, ևս երջանկութիւն ունեցալ տեսնել Յիսուսի մարդկային մարմինը, ինչպէս որ նկարում են նրան երկնք համբառնալիս»։ «Մէկ օր, ասում է նա

իր ինքնակենսագրութեան մէջ, երբ ևս աղօթարանումն էի, անկարծ ինձ թւեց, թէ ևս զաշտումն եմ խուռն բաղմութեան մէջ։ Մարդիկ շրջապատել էին ինձ գինւորւած ճիւղ դանակով, որը սրով, որը զաշտով, որը երկար փայտով։ Ամեն կողմ ինձ մահ էր սպասում և ոչ ոք չկար, որ պաշտպանէր ինձ։ Այս սարսափելի չփոթմունքի մէջ ևս աչքերս բարձրացրի ղէպի երկնք և տեսալ Յիսուս Քրիստոսին, ոչ թէ երկնքում, ալ օդի մէջ, գլխից վեր։ Անտեղից նա տարածեց ձեռները ինձ վրա և իր պաշտպանութիւնը խոստացաւ ինձ։ Անմիջապէս բոլոր երկիւղս անհետացաւ և այս ամբոխը, չնաչելով իր կատաղութեանը, անկարող եղաւ ամենաչնչին վնաս անգամ հասցնել ինձ»։

Աննա Կաթերինա Հեմմերիք ընկնում էր սքանչացման մէջ և վերին աստիճանի բարդ ցնորքներ ունենում։ Նա հրեշտակների հետ ճանապարհորդում է երկնային եթերքում և անչափ տարօրինակ տեղերում։ Մի հրաշալի նկարագրութիւն է տալիս նա իր ցնորական երկնային Նրուսաղէմին։

«Աս տեսալ երկնային Նրուսաղէմն, ասում է նա. այս մի փալւան ոսկէ քաղաք էր, նա կանգնած էր բարձր եթերքի մէջ առանց նեցուկի։ Գոյները և պատերը թափանցիկ էին և չէին խանգարում ինձ տեսնել, թէ ինչ է կատարւում դրա ներքը։ Ալտեղ կային փողոցներ, պալատներ և ընդարձակ հրապարակներ, ալտեղ խնւում էին մարդանման արարածներ, որոնք տարբերւում էին միմեանցից ղէմքով և արժանաւորութիւնով։ Քանի խոր ուշադրութիւնով էի դիտում քաղաքի ներքին կաղնութիւնը, աչքան աւելի սքանչելի և գերբնական էր երևում նա ինձ։ Կենդանւում մի ծառ էր բարձրանում, որի ճիւղերի վրա, ինչպէս նստարանների վրա,

բազմած էին լուսով սփռւած մարդկային էակներ: Քանի բարձր էին նստած նրանք ծառերի վրա, աչքքան փառահեղ էին երևում: Ամենից վեր նստած էին պատկառելի սուրբ ծերունիներ, իսկ ծառի գագաթը զնդած էր և ներկայացնում էր մեր աշխարհը, որի վրա կանգնած էր խաչը» և այլն:

Կանանց մէջ աչքալիսի կրօնական ցնորքները հազւագիւտ չեն և կաթոլիկ երկիրները շատ աչքալիսի կանաչ են ծնել: Սակայն տղամարդիկ ևս, կրօնական զգացմունքներով լափշտակւած, իրանց երկնքի ընտրեալն և ր կարծելով, իրանց ցնորքների մէջ մօտեցել են երկընքին, տեսել են Աստածութիւնը, հրեշտակներին, վերջին դատաստանը, դրախտն ու դժոխքը և այլն:

ՄԱՐԳԱՐԷՆԵՐ ԵՒ ՔԱՐՈՋԻՉՆԵՐ

Այս տեսակ ցնորական տեսիլները համոզում են աչք մուկներին, թէ իրանք Աստծու անմիջական խնամատարութեան ներքոյ են գտնւում: Մի քիչ էլ — և աչք համոզմունքը մի ուրիշ գոյն կը ստանալ — աչք, նրանց մէջ մի գերբնական ուժ է նստած, մի հրեշտակ, մի սուրբ, կամ մի աստածութիւն, և աչք միտքը նրանց հրաշքներ գործել կը տալ. — նրանք կը դառնան մարգարէներ, վեղափոխիչներ, քարոզիչներ և այլն:

«Այս մարդկանց խոր համոզմունքը, թէ իրանց ցնորքները ճշմարտութիւններ են, զօրեղ և լափշտակիչ պերճախօսութիւնը, որով նրանք լալտնում էին իրանց համոզմունքները, բնականաբար ահալին կարեւորութիւն էին տալիս աչք անձերին հասարակութեան աչքում և բարձրանում էին նրանց հասարակների առաջ: Աչքալիսի լափշտակող զօրութիւն ունեցան օրինակ Լազարեաւորին, Բրիանտը, Լոյօլան, Մալինաւին, Յովհաննա դ'Արկը,

Անաբապտիստները և այլն» (Լոմբրոզո):

Լազարեաւորին ծնւել էր 1834 ին Իտալիայում մի սաղապանից, որը, ասում են, արեցող էր: Գեռ պատանի հասակում նա տարօրինակ բնաւորութիւն էր արտապտում, — գրում էր ոտանաւորներ, ողբերգութիւններ, թէ և ուղիղ գրել չգիտէր: Մի քիչ չետոյ նա իրան արեցողութեան տեղ և սկսեց կրօնական ցնորատեսիլներ ունենալ: Մէկ օր նրան երեւաց Աստածածինը, որը հրամայեց նրան գնալ Պապի մօտ և լալտնել, որ եկել է մի աստածալին պատգամ կատարելու: Յետոյ նա մի քանի ամիս անցկացրեց մի ճգնաւորի հետ (իրը թէ նոյնպէս Աստածամօր հրամանով) և ալտեղ իր ճակատի և մարմնի վրա զանազան նշանակետեր դրոշմեց, աշխատելով համոզել ուրիշներին, թէ ալգ՝ Ս. Պետրոսի կնիքն է: Այս համոզմունքը, թէ նրան առաքել է երկինքը, նրա խեղացնորութեան հիմնաքարն է դառնում և Լազարեաւորին ապշեցնում է Իտալիան իր տարօրինակ վարդապետութիւնով: Նա շուտով կարողացաւ իր շուրջը ժողովել մի խումբ հետեւողներ, որոնց լալտնում էր, թէ ինքը ուղարկւած է Աստծուց, և թէ ինքն էր Քրիստոսը, մեծ դատաւորը և մեծ արքան: «Երկրային բոլոր զօրութիւնները պիտի խոնարհին իմ առաջ, իմ մի ձեռի շարժումը բաւական է, որպէս զի խորտակւին ինձ դիմադրողները»: Գնալով Լազարեաւորի ցնորքները աւելի խեղացնոր են դարձնում նրան. — նա իրան անւանում է «Թագաւորների թագաւորը, Գաւթ թագաւորի ժառանգ, մինչև անգամ Քրիստոս: «Ինձ, մարդկանց ամենանսեմիս, Աստած խոտացել է ամբողջ երկիրը», ասում է նա. Նա ինձ պարգևեց մարգարէութեան շնորհ և լուսաւոր միտք, որպէս զի կարող լինեմ ուղղել օրէնքները և դիւտեր անել դիտութիւնների և արհեստների մէջ»: Անտարակոյս եթէ աչք

մարդը միջին կամ հին դարերում երևան դար, նա կարող կը լինէր մի մեծ կրօնական լեզափոխիչ դառնալ և գուցէ նրա ցնորական տեսիլները մի նոր դաւանութեան հիմնաքար դառնալին: Տասնեկիններորդ դարում ծնւած լինելով, Լազարրեան կարողացաւ միայն մի խումբ հետեւողներ ունենալ և խելագարների շարքն անցաւ:

Այսպէս 1212 թ., երբ Խաչակիրների արշաւանքները, սարսափելի զոհեր տանելով, չկարողացաւ փրկել Նրուսաղէմը մահմեդականների ձեռքից, ամբողջ քրիստոնէական աշխարհը լուսաճատութեան մէջ ընկաւ, աչն ժամանակ, իբր ընդհանուր լաիշտակման արդիւնք, ասպարէզ է դուրս գալիս մի փոքրիկ հովիւ Ֆրանսիայի մի գիւղում, և իրան Աստու ընտրեալ երեակալելով, հաւատացնում էամենքին, թէ նրան երեացել է Աստուած և հրամայել է երթալ սուրբ երկիրը փրկել գերութիւնից: Ահազին քանակութիւնով, մօտ 30-հազար, 8—10 տարեկան երեխաներ և չափահասներ հետեցին աչս մանկան և կազմեց պատմութեան մէջ հռչակաւոր «մանուկների արշաւանքը», որը աչնպիսի ողբերգական վախճան ունեցաւ: Յովհաննա դ'Արկը, Ֆրանսիայի աչս ազատիչ կոչը իր ցնորքների մէջ ս. Կոսթին էր տեսնում, և նրա հրաւանով էր գործում իր հրաչքները: Լուղան, եղբիւնների եղբարութեան հիմնադիրը, ինչպէս և Լութերը, բողոքական եկեղեցին հիմնողը, անդադար ցրորքների մէջ էին և իրանց երկնքի ընտրեալներ էին համարում: Նոյն ժամանակները զանազան երկիրներում երեցան մի շարք քարոզիչներ, հետազօտիչներ, որոնց լաջողում է դեռ հետեւողներ զտնել խաւար ամբոխի մէջ: Բարթոլոմէօ Բրանտանօ, համարեա 100 տարեկան ծերունի, սկսեց երեակալել, թէ ինքը Յովհաննէս Մկրտիչն է և շապկանց խաչը ձեռին և մի գանգ թևի տակն առած, սկսեց քա-

րողել Սիւննալում, մալ դալէութիւններ անել և հրաչքներ գործել...

Կապերների աղանդ հիմնողը, Գէորգ Ֆոկսը, մէկ օր լսեց իբր թէ երկնքի ձայնը՝ «Յիսուս Քրիստոս հասկանում է քս խօսքերը»: Նա կաշւէ շորեր էր հագնում, ապրում էր ծառերի բների մէջ և քարոզում էր, թէ բոլոր քրիստոնեաները, ինչ դաւանութեան էլ պատկանեն նրանք, պիտի Աստու ողորք համարեն:

ՍՐԲԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐ

Ահա անհատական սրբականութեան մի քանի օրինակներ: Սակաւն ինչպէս դիւակնութիւնը երբեմն համաճարակի կերպարանք է ընդունում, նոյնպէս և սրբականութիւնը լաճախ տարափոխիկ բնաւորութիւն է ունեցել: Մի հասարակութեան մէջ, որի անդամները միևնոյն կեանքով են ապրում, միևնոյն ձգտումներն ունին, հիպնոտիումը (ներշնչումը) ամենապարարտ հող է գտնում իր զարգացման համար: Այս օրէնքը մենք լուսաբանել ենք աչս աշխատանքի առաջին մասում: Մարդկութեան կրօնական զգացմունքները լաճախ լարուցել են ոչ միայն անհատական լաիշտակումներ, որոնք մոլութեան և խելացնորութեան էին հասնում (ինչպէս երեաց մեր առաջ, բերած օրինակներից), ալ և առաջացնում էին երբեմն խիտտ տարածւած համաճարակներ:

Մի կողմ թողնելով հին պատմութիւնը, որը դեռ լաւ լուսաբանւած չէ աչս տեսակետից, մենք մի քանի օրինակներ կը բերենք միջին և նոր դարերի պատմութիւնից:

Խաչակիրների արշաւանքները մեզ կրօնամոլութեան համաճարակների մի շարք դէպքեր են տալիս: Անգրագէտ հովիւները, վառւած Յիսուսի գերեզմանը գերութիւնից

փրկելու կրակով, չանկարձ մարգարէներ և քարոզիչներ էին չափաբարում իրանց և կարողանում էին հարիւր հազար մարդիկ իրանց ցնորքներին զոհ տանել: 1212 թւականին Ֆրանսիայի փոքրիկ հովիւ չանկարձ իրան սուրբ է չափաբարում, որին վիճակած է վերջապէս փրկել ս. գերեզմանը մահմեդականների տիրապետութիւնից, և մի մեծ քանակութեան մանուկներ քարոզներ են կարդում, հրաչքներ են անում, և ամբողջ գնդեր էին կազմակերպում խելքից հանած երեսաներից, որոնց հաւատացնում էին, թէ ծովը պիտի ձեղքւի, որպէս զի նրանք չորով անցնեն ս. Երկիրը: Յայտնի է, որ այս մանուկներին չարագործները խաբէութիւնով լցրեցին նաւերը և տարան Արեւելեան երկիրները վաճառելու: 1566 թւականին Ամստերդամում տիրող քարողչութեան համաճարակը նոյնպէս վարակիչ հիւանդութեան բնաւորութիւն ստացաւ:

«Սեւիճնալի լեռներում տարածւած քարողչութեան համաճարակը ծագեց մի ոմն Սերր անունով կ'օնամոլից, որը եկել էր Ֆրանսիա հակապապական քարոզներ անելու: Նա այն աստիճան չափշտակման հասցրեց ամբոսին իր ներշնչումներով, որ չանկարձ հարիւրաւոր Փանատիկոս քարողիչներ երեան եկան: Սերրը շունչ փչելով իր աշակերտների բերանը, ներշնչում էր նրանց քարողչութեան և մարգարէութեան շնորհ, Եօթը—ութ տարեկան երեխաները սկսեցին քարողել և գրգռել ժողովուրդը, որը հաւաքւում էր ամալի տեղերում, բարձր լեռների ծայրերին, ալբերում, թւով մինչև 3—4 հազար: Աջտեղ մարգարէ Սերրը փչում էր նրանց բերանին և ասում էր. «Թող իջնի քեզ վրա ս. Հոգին», և այս մարդիկը սկսում էին չանկարձ մարգարէութիւններ անել, ընկնելով կարկաման մէջ և փրփուրն բերներին թաւալ տալիս գետնին»: Այսպէս է ասում պատմագիրը:

Մի ուրիշ համանման էպիդեմիա ծագեց 1841 թ. Շեցիայում:

Մի տանուվից տարեկան աղջիկ, Լիզա Անդերսդոտէր, չանկարձ, հակառակ իր կամքին, սկսեց ժամերով մաքուր և զիւ ձաշնով սաղմոս երգել: Մի քիչ ցետոջ նա սկսեց կրօնական քարոզներ կարդալ, հիպնոսական քնի մէջ էր ընկնում և զարթնելիս հիստերիկ կարկաման մէջ էր ընկնում. ցետոջ երբ հանդարտւում էր, սկսում էր մարգարէութիւններ անել և պնդում էր, թէ պատգամներ է ստացել երկնքից և թէ նրա շրթունքներով Հոգին Սուրբն է խօսում:

Նրա քարոզների ներշնչման ներքոյ շուտով ուրիշ կանաչք և աղջիկներ սկսեցին նոյն հիպնոսական երեւոթները ներկայացնել, Գնորքների մէջ նրանց երեւում էին երկինք, Աստուծ և հրեշտակներ, դժոխք և արքայութիւնը: Հետեւելով Լիզա Անդերսդոտէրին, նրանք քարողում էին հոգու փրկութեան մասին, և մարգարէութիւններ էին անում աշխարհի վախճանի և անեղ դատաստանի մասին: Եւ զարմանալի է, թէ ինչ հեշտութիւնով էր չափշտակւում ամբոսը:

Մի ոմն, Պիկար անունով, իր ցնորքների մէջ չափշտում է թէ ինքը Աստծու որդին է, որին Հայրը ուղարկել է սովորեցնելու մարդկանց որ ղէն գցեն հագուստները, մերկանան, որ կանաչք հասարակաց լինեն... Եւ դուրս են գալիս հետեւողներ, որոնցից կազմւում է ազամիտն երի աղանդը: Կալւինիստների, եանսենիստների, անաբապտիստների աղանդները նոյնպիսի սկիզբն ունեն... Մարդ մի տարօրինակ ապշութիւն է գլուժում այս զէպքերի առաջ: Ինչով բացատրել խելացորտութեան այս վարակումն, ինչպէս տասնիններորդ դարի նրբացած լուսաւորութիւնը չ'ոչնչացրեց այս անմիտ մոլութիւնները?

Այսօր իսկ քաղաքակրթւած աշխարհներում բազմաթիւ զարգացած մարդիկ, նոյն իսկ գիտնականներ, հաւատում են, թէ ոգիները կարող են խօսակցել մեզ հետ սեղանների և ուրիշ առարկաների միջոցով, և այս օտարոտի միտքը, որը կարող էր միայն հիւանդ ուղեղում ծագել, մի շատ տարածւած դաւանութեան հիմնաքարն է դառել, որը այսօր միլիոնաւոր հետեւողներ ունի:

Մենք խօսում ենք սպիրիտիսմի մասին:

ԷՔՍՍՈՂ ԿՍՄ ՍՔՍՆՁԱՅՈՒՄՆ

Ինչ է էքստազը—Օրինակներ—Սքանչացման երեւոթները—Անհատական և խմբային անզգայութիւն—Լուրդ էքստատիկները—Ինքնատանջում—Կրօնամեղական ծէսեր:

Սրբակիրները, կենտրոնացնելով իրանց հոգեկան և մտաւոր բոլոր ուժերը մի որ և է կրօնական գաղափարի վրա, ընկնում են ինքնահիպնոսի զանազան աստիճանների մէջ: Նրանք իրանք հիանալի կերպով նկարագրում են, օրինակ իրանց քարացումն կամ թովչութիւնը (տես մասն առաջին գրքուկի էջ 86):

Այս դրութիւնները, որոնք առաջանում են մտքի կենտրոնացումից կրօնական գաղափարների վրա, չափն են էքստազ կամ սքանչացումն անուանով:

Բոլոր վերոիշած սրբակիրները ենթակալ էին էքստազի, որի մէջ նրանց երեւում էին Աստուած, Քրիստոս, Մարիամ կոյսը, զբախտ ու դժոխքը և անհամար ցնորական տեսիլներ:

Էքստազի մէջ մարդ չանկարծ համարեա անշնչանում է, նրա մտաւոր և զգացողական ուժերը կորած են, նա ոչինչ չի զգում և ոչինչ նրան չի զբաղեցնում. նա միանգամայն չափշտակւած է, նրա հոգին կարծես ջուկ-

ւել է մարմնից: Այս դրութեան մէջ նրանք մնում են շատ ու քիչ երկար, չնայելով զարթնում են ու ուշքի են գալիս, պատմում են իրանց ցնորքները: Այս դրութիւնը սաստիկ նման է թովչութեանը (оборожение):

Անշա Հեմմերիխը, չաճախ ընկնում էր այս դրութեան մէջ: Մարգարիտա Ալակոբը երկար ժամանակ մնում էր սքանչացման մէջ և ուշքի գալով զարմանալի ցնորական տեսիլներ էր նկարագրում: ձգնաւոր Ժակոպօ մի անգամ երեք օր սքանչացման մէջ մնաց, այնպէս որ կարծում էին թէ նա մեռած է: Այս դրութիւնը նոյնն է, ինչ որ մենք նկարագրել ենք Լետարգիա անուանով:

Հետեւեալ դէպքը միանգամայն նշանաւոր է: Զոն Էնդիրբերխտը ընկնում է լետարգիական քնի մէջ և նրան երեւում է երկինքն ու դժոխքը: Ահա ինչպէս է նկարագրում նա էկստազը:

«Հինգշաբթի, կէսօրին, ես զգացի մահի մօտենալը, —մահը արձրանում էր ոտերիցս դէպի վեր, մարմինս քարացաւ, ոտերիս, ձեռներիս և միւս մասերի զգացողութիւնը կորաւ: Յս չէի կարողանում խօսել ու ոչինչ չէի տեսնում, լեզուս դադարել էր շարժւելուց: Յս լաւ լսում էի, շրջապատողներս ասում էին միմեանց—«Տեսէք ոտերը սառել են, նա շուտով կը մեռնի»: Մի քիչ չնայելով լսողութիւնս էլ կորցրի: Այնժամանակ ինձ թուցրին նետի արագութիւնով և ես չանկարծ տեսաւ, որ արքայութեան դռանն եմ... Նրբ ուշքի էի գալիս, ես զգում էի, որ մարմինս ոտիցս մինչև գլուխս կամաց-կամաց կենդանանում էր և սկսեցի լսել իմ շուրջն աղօթողների ձայնը: Այնուհետեւ ինձ վերադարձաւ տեսողութիւնս, իսկ չնայելով ոչ ժերս ետ եկան»: Զոնի սքանչացումն տեւում էր 10—13 օր, երբ նա մեռածի նման էր և առանց հացի ու ջրի մնում...»

Ինչպէս տեսնում ենք մտքի կենդանացումն մի որ և է կրօնական գաղափարի վրա կարող է քցել մարդկանց հիպնոսական դրութիւնների մէջ։ Ձոնի դրութիւնը անտարակոյս իսկական էկստազ է, որը աչն աստիճանի ուժեղ էր, որ հասցրել էր նրան անզգալական քնի (լեթարգիա)։ Էկստազը չափնի է մեր ժողովրդի մէջ տեսիլք անունով։ Անապք (երբեմն մարդիկ) ընկնում են մի օտարտի քնի մէջ (լեթարգիական), մնում են մէկ ու մի քանի օր իբրեւ մեռած և զարթնելիս սկսում են պատմել իրանց տեսիլները, որոնց մէջ մեծ տեղ է բռնում դրախտի կամ դժոխքի նկարագրութիւնը։ Սակայն և խաբեբալութիւնը մեծ դեր է խաղում աշակերտի տեսիլքների պատմութեան մէջ։ Շատերը չինժու տեսիլքներ են պատմում, աւելացնելով, իբր թէ աչս քնի մէջ նրանք աչս ինչ սրբից վախ չափելու, վերքեր առողջացնելու, գուշակութիւններ անելու և ուրիշ հմայութիւնների չորհրդ են ստացել...

Սքանչացման անզգալութիւնը։ Զգացողութեան պակսելը մի չափազանց նշանաւոր ֆակտ է։ Աչս մարդկանց բոլոր հոգեկան ուժերը մի որ և է կրօնական կէտի վրա դարձրած՝ նրանք համարեա անտարբերանում են դէպի դրսից ստացած զրգուռմները։ Աչսպէս էքստազի մէջ ընկածների (էքստատիկների) մարմինը կարելի է ալրել, կտրել և նրանք ոչինչ չեն զգալ։

Աչս անզգալութեան հետ միասին, էքստատիկները ներկայացնում են և քարացման (կատալեպսիա) երեւութները, օրինակ անդամների քարացումն (տես Հիպ. Ման Առաջ. գրքուկի էջ 30)։

Ալամիլ պատմում է, թէ մի քանի էքստատիկներ ամիսներով մնում էին արձանացած, ամբողջ մարմինը սառտիկ կարկամման մէջ... Աչս անզգալութիւնը ահա-

զին դեր է խաղացել և ալժմա էլ խաղում է Աքանչացման պատմութեան մէջ։ Նա է որ, հարւածելով ամբիսի միտքը, ստրկացրել էր նրան և հլու դարձրել հին կրօնական պաշտօնեաների ձեռքին։

Հնդկաստանում և առհասարակ Արեւելքում, Բիբօի ասելով, որոշեալ կանոններ գոյութիւն ունէին էքստազի մէջ ընկնելու համար։ «Պէտք էր անշարժ կանգնել, նա՛նել անընդհատ երկնքի կամ մի փալլուն առարկայի, իր քթի ծալրի» (ինչպէս աչս անում էին Հնդկաստանի ֆակիրները) կամ իր պորտին (Աթոս լեռան կրօնաւորները), կրկնել Օսմ բառը (որ նշանակում է բրահմա)։ աչս միջոցով մարդ կամաց-կամաց կորցնում էր թէ զգալու և թէ չարժեւելու կարողութիւնը։ «Բժ. Շէշը տեսել էր մի ֆակիրի, որը կարողանում էր իրան միանգամայն մահացնել և ժամերով անկենդան մնալ։ Բրէզի ասելով, ֆակիրները չաճախ պատւիրում էին, որ իրանց մի սլարիկի մէջ կարեն, կամ մի արկղի մէջ փակեն և թողնեն։ Երբոր նրանց հանում են փոսից, նրանք կենդանանում են» (բժ. Սիմօն)։

Յրանսիայում կալ մի «հրաշագործ գերեզման»։ Սա մի ճգնաւորի շիրիմ է, որ գտնւում է Ս. Մեղար գերեզմանատանը, Լուրդում։ Ճգնաւորը տիրացու Պարին էր, որը մեռել էր 1827 թ. և որի գերեզմանի վրա դեռ մինչև ալսօր Յրանսիայի բոլոր անկիւններից զրմում են ներդալին հիւանդ մարդիկ առողջութիւն գտնելու։ Աւ ճշմարիտ որ աչն անսահման հաւատը, որը ժողովուրդը տածում է դէպի Պարիի գերեզմանը, երբեմն քժչկում է ներդալին հիւանդութիւններ։

Աչս գերեզմանի վրա ներդալին արարարածները չաճախ նույնպէս ընկնում են կրօնական սքանչացման մէջ և աչն ժամանակ ներկայացնում են անզգալութեան միանգամայն զարմանալի օրինակներ։

Կանաչք և օրիորդներ զարմանալի հնարագիտութիւնով իրանց տանջել են տալիս առանց ցաւ զգալու: Շատ երկար կը լինէր թւել մի առ մի աչն տանջանքները: Մենք կը բաւականանք միայն մի քանի օրինակներ բերելով: Քոյր Մարգօն չոքեցնում էր իր առաջ մի տղամարդու և ստիպում էր նրան բռունցքով հարւածներ տալ իրան ճիշտ ծծերի տակը. այս հարւածների թիւը հասնում էր 3000-ի: Այս ներդաշնակները շատ սիրում էր «գլխի հարւածները»: Հինգ տղամարդ կանգնում էին նրա շուրջը և հերթով բռունցքներով արագ խփում էին նրա գլխին: Յետոյ գալիս է «փշեպալ պսակը», — նրա գլուխը մի երեսորբիչ էին կապում և նրա ու գլխի արանքը մի փաշտ անցկացնում, որով աչքան էին պտտում, մինչև որ նա ասում էր «բաւական է»: Ուրիշները սիրում էին, որ իրանց խեղդեն, — բարձրացնելով վաչր քցում գետին, կրկնելով 20—30 անգամ!

Մարգօին ցետոյ ենթարկում էին «ձգ ձգ ման»: Չորս թուկ էին կապում նրա մէջքից, ցետոյ չորս հոգի նստում էին նրա շուրջը, բռնում էին թուկերի ծալերը, ոտերը դէմ էին անում կուրծքին, մէջքին և կողերին ու ձգում, որքան ուժ ունէին, մինչև որ խեղճ կինը ասէր. — «չնորհակալ եմ»: Յետոյ նրան պառկեցնում էին մի տաբուրետի վրա, մէկը գլուխն էր բռնում, իսկ չորս ուրիշ մարդիկ ձգում էին նրա թևերն ու ոտերը աչնպէս որ ոսկորները չըխկում էին! Այս ողորմելի էքստատիքները ստիպում էին ծեծել իրանց մահակներով, բռունցքներով պարանոցին խփել, կամ մէկ ժամ քաշ տալ իրանց ոտերից, աչնպէս որ երեսը գետնին քսւի!...

Մի աղջիկ մէջքը պատին է տալիս ու ստիպում է 30 ֆունտանոց երկաթով ուժգին հարւածներ տալ փորին: Կատարինէ Տիւրպէն հրամայում է վառելափայտով

խփել փորին: Կոյս Մուէն հրամայում է մի ահագին բանալի փորը կոխել, միւսները իրանց ծակոտել են տալիս դանակներով և աչն և աչն:

ԽՄԲԱՅԻՆ ԱՆԶԳԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆԱՄՈՒԱԿԱՆ ԾԷՍՆԵՐ

Հնդկաստանում ֆանատիկոսները կրօնական տօներին սարսափելի ինքնատանջանքներ էին հնարում: Նրանք երկար չանկաներ էին ցցում իրանց մարմինը, ախ էին ընկնում և ձոճում էին: Մի չալտնի կարգի զէրւիշներ կտրատում էին իրանց մարմինը սուր գործիքներով և աչում էին իրանց երկաթէ շշերով:

Չինաստանի լամաների մէջ մի սոսկալի ծէս կա, որը կալանում է նրանում, որ նրանք ամբոխի առաջ իրանց փորը պատում են: Մահմեդականների երկրներում կրօնական տօներին մարդիկ հեշտութիւնով խմբովին ընկնում են սքանչացման մէջ և տանջանքներ հնարում իրանց համար: Շատ տարի չի անցել աչն ժամանակներից, երբ օրինակ Նրեանում Շախսէվախսէի օրը ահագին ամբոխը կիսամերկ մարմինը դանակներով թրաշելով, չղթաներով ծեծելով, սոսկալի գոռոց ու վաչնասուն բարձրացնելով անցնում էին քաղաքի փողոցներով, ետևներից հետքեր թողնելով, զազանալիս կատաղութեան հասած, աչքերն արիւն կոխած, ինքնամոռացման մէջ:

Մի սոսկալի կրօնական ծէս նկարագրել է չալտնի գիտնական Պօլ Բէրը:

Տանուհինգերորդ դարում մի ոմն, Սեդի Մահմեդ բէն Ալաա անունով, հիմնեց մի աղանդ, որը կրում է Ալաաուա անունը: Ալաաի հետևողները ամեն տարի ժողովում են իրանց սրբավայրը և աօնում են հիւնադրի տարեդարձը: Ծէսը սկսում է թմբուկներով և

երգերով ի պատիւ Ազգի Մահմեդի: Յանկարծ մէկը ոտի է կանգնել, թևերը վեր բարձրացրած, աչքերը լալն չռած, խապոտ ձալնով բացականչութիւններ արձակելով. նա թռչկոտում է, մարմնի վերին կէսը գողգողացնելով և գլուխը տարուբերելով ուսերի վրա, ինչպէս տեղից խախտւած մի բան: Ծերերից մէկը տալիս է նրան մի կակտուարի պտուղ (տատասկաթուղ), տատասկներով և երկար փշերով ծածկւած: Նա վերցնում է աչք պտուղը և սկսում է շան նման կրծել նրան. տատասկները պատառոտում են թշերը և դուրս ցցում, արիւնը շրջում է բերանից: Նրանցից չնտղ վեր են կենում ուրիշները, Հիջի Ալսա գոռալով, լետոլ դարձեալ նորերը — և կատաղութիւնը ընդհանուր է դառնում: Մէկը ճանկերով կարիճներ է ուտում, միւսը սրածալը երկաթով ծակում է իր թշերը, երրորդը ապակու կտորներ է կլանում, մի ուրիշը տաքացրած երկաթ է լիզում: Գոռում գոչումները սաստկանում են, ամենքը տարուբերում են զարմանալի արագութիւնով և բոլորը գոչում են «Հիջի Ալսա, Հիջի Ալսա»:

Ինչպէս տեսնում ենք՝ սրբականութիւնը իր արտապտոտութիւններով նոյնն է, ինչ որ էր զիւականութիւնը, ալսինքն մի հիպնոսական երևոյթ, որի մէջ ցնորքները, քարացման և լեթարգիայի դրութիւնները, անզգալութիւնը, վերջապէս ալն զարմանալի երևոյթը, որին մենք սքանչալիքումն կոչումը տւինք — ոչ ալ ինչ են, եթէ ոչ արդիւնք ինքնաներշնչման:

Մի խոշոր ֆակտ, որը ինքն ըստ ինքեան աչքի է ընկնում ալ երևոյթների ուսումնասիրութիւնից, ալր մարդու չափումն է դէպի ընդօրինակումն: Մի կին, սիրական գրգռման մէջ, ցնորքների մէջ սիրահարական

չարաբերութիւնների մէջ է մտնում դերի հետ և չանկարծ նրա հետ հարկւրաւոր ուրիշ կանաչք դիւահարում են ու մէկի հիւանդական ցնորքը տեղի է տալիս դիւականութեան համաճարակի: Մի ուրիշը կրօնամոլական ցնորքների մէջ իրան երկնքի ընտրածն է համարում, սկսում է քարոզչութիւններ և մարգարէութիւններ անել և հարկւրաւոր մարդիկ նոյն ցնորքներն են ստանում, սքանչացման մէջ ընկնում, նոյնպէս քարոզչութիւններ անում, — ու առաջ է գալիս սրբակրօնութեան համաճարակներ:

Մարդկութեան պատմութեան ծալքերում ընդօրինակման կամ նմանողութեան երևոյթները վերին աստի ճանի բաղմատեսակ են և ահագին դեր են խաղացել ազգերի կիանքի զարգացման մէջ: Ֆրանսիական դիտնական Տարդը մի լուրջ էտիւդ է տւել ընդօրինակման օրէնքների մասին: Մենք կը հետեւենք ալս մարդաբանին մեր առաջիկալ չօղածում:

Բ.

ԸՆԴՈՐԻՆԱԿԱՄԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Անհատական օրինակումն—Տարրի, Լիբրոի և ուրիշների կարծիքը—Արագ և մեղմ ընդօրինակումն—Մեծ մարդիկ—Հաւարական նմանողութիւն—Հիւանդական նմանողութեան դէպքեր—Ընդօրինակումն ընդհանուր է և փոխադարձ—Ինչ ձևի ներշնչչումներ են ընդունում հասարակութիւնից—Պատմութիւնը և հնագիտութիւնը նմանողութեան տեսակէտից—Ամբողջումն

La Société c'est l'imitation.

Tarde.

Հասարակութիւնը նմանողութիւն է:

S * r * r :

Մեր ծննդեան առաջին րոպէից մինչև մեր կեանքի վերջին րոպէն մենք ենթակալ ենք ներշնչումների,—ներշնչում չէ արդեօք մօր «օրօրը», ներշնչում չէ արդեօք երեխային քալել, խօսել սովորեցնելը, ներշնչում չէ նրա ամբողջ կրթութիւնը ու դաստիարակութիւնը, ներշնչում չէ արդեօք ուրիշների ձևերի, սովորութիւնների, ուրիշների լեզւի, գաղափարների, քաղաքակրթութեան փոխառնումն?

Անհատի և հասարակութեան ամբողջ զարգացումն ոչ ալ ինչ է, եթէ ոչ ներշնչման արդիւնք: Միայն ապա ձևի ներշնչումները կատարւում են մեղմ, համարեա անզգալ կերպով, առանց զդրդիւնի: Այստեղ տիրապետում է կրկնութեան ազդեցութիւնը, որը կաշանում է նրանում, որ մինն ունի ազդեցութիւնը լաճախ կրկնելով (օրինակ մի բառի լսելը կամ միևնույն տարադի տեսքը):

մեզ կիսարթնութեան մէջ է գցում և մենք հետևում ենք ազդ. ներշնչման:

Եթէ լաւ քննելու լինենք ներշնչողի հոգեբանութիւնը, կը տեսնենք, որ նրա գլխաւոր հիմնաքարը ն մանողութիւնն է կամ ընդօրինակումն է, որի ամենախոշոր ու աչքի ընկնող արտապատմութիւնները մենք ուսումնասիրել ենք ալս աշխատութեան առաջին մասում Կապիկութիւն անունով (տ. մ. առաջին, էջ 32):

Այս նմանողութիւնն է, որը վերջին ժամանակներս մի շարք լուրջ հասարակագէտներ և մարդաբաններ անհատի և հասարակութեան զարգացման միակ գործոն են համարում:

«Մի անձն, ասում է Տարդը, որը ապրում է բազմակողմանի և գործունեալ կեանք վարող հասարակութեան մէջ, որը բացում է նրա առջև տեսարաններ, կոնցերաններ, ընթերցումն, խօսակցութիւն և ալս բոլորը միշտ փոփոխւած, միշտ նորոգւած ձևով—ալս անձն ազատ է մնում մտաւոր մեծ ճգնումից, նրա քարացման մէջ ընկած և, միևնույն ժամանակ վերին աստիճան գրգռման հասած, ուղեղը, կրկնում եմ, ընկնում է հիպնոսի մէջ»:

Տարդից առաջ, լալտնի Լիբրօն բացադրել էր ընդօրինակման օրէնքը:

«Եթէ ուշադրութիւնով քննելու լինենք, թէ ինչեր են կատարւում մարդու հոգու մէջ, ասում է նա, կը նկատենք, որ ընդօրինակումն մի պահանջ է նրա համար, նրա գոյութեան անհրաժեշտ պայմանն է: Մարդ խորհում է, հաւատում է, դատում է և արտապատմում է իր մտքերը իր ընդօրինակելու լատկութեան շնորհով: Նրա ամենափոքր գործն անգամ նմանողութիւն է ուրիշների արածին: Եւ ալս ընդօրինակումն կատարւում է մեքենայաբար, առանց և լաճախ հակառակ մեր կամքին: Ապալիս

անդիտակցարար և չաճախ ակամաջ մարդ չորանջում է, երբ մէկը չորանջում է, կամ շաղկում է, երգում է և այլն: Եւ մարդ հազարաւոր աչապիտի բաներ է անում և մինչև անգամ չգիտէ, թէ ումից է վեր առել աղչ: Պատահում է, որ մարդ ուրիշից լսած մի եղանակ երգում է, կարծելով, թէ իր հնարածն է երգում»:

Լաւ ու վատ ձեւերը ու սովորութիւնները կազմուած են միայն նմանողութիւնով: Այս մի տարրական գիտելիք է, որը և թելադրում է ծնողներին հեռու պահել իրանց զաւակներին վատ ազդեցութիւններից...

«Մենք ընդօրինակում ենք ոչ միայն աչն բաները, որոնք հարւածում են մեր զգացմունքները, այլ և աչն բոլորը, ինչ որ հարւածում է մեր բանականութիւնը: Այո, անդիտակցարար մենք սեփականացնում ենք ուրիշների բարոյական և քաղաքական համոզմունքները, սնապաշտութիւնները և այլն. մի խօսքով—մենք ընդունում ենք աչն բոլորը, ինչ որ մեր մտքի մթնոլորտն է կազմում... Մարդս աւելի տրամադիր է գէպի համակրութեան կամ հակակրութեան ընդօրինակումն: Մենք սեպհականացնում ենք, առանց քննելու, ցնծութիւն, լաց, արհամարհանք, զաչլութ, ատեւութիւն, վրէժ և այլն: Այս բոլոր զգացմունքները ընդօրինակման հետեանքն են: Ես մի խեղճ մարդ եմ տեսնում, ինձ նրա տեղն եմ գնում, երեւակապում եմ ինձ նրա տանջանքները և խղճում եմ նրան»:

Տոկարսկին ասում է. «Մարդու ձգտումն գէպի նմանողութիւնը նրա հոգեկան կեանքի հիմնական օրէնքն է: Այս մի մեծ ուժ է, որը մղում է մարդկութիւնը գէպի անդադար առաջ ադիմութիւն:»

Մեզ շատ հեռու կը տանէր այս երևույթի հոգեբանական պատճառների քննութիւնը,—սա ուղեղի վանդակների ներքին գործունէութեան և նրանց փոխադարձ

շարաբերութիւնների խնդիր է: Այժմենք միայն, որ դրսից եկած ոչ մի ազդեցութիւն, ոչ մի զգացողութիւն անհետք չի մնում ուղեղի վրա և որ երեխաւութիւնից մինչև մահ մեր ստացած տպաւորութիւնները ժողովուած են ուղեղում, կարգաւորում են, բարդում են և կազմում են բանական մարդը իր հոգեկան շուրջմունքներով, իր կըրքերով, իր բանականութիւնով, իր չափումներով, մի խօսքով իր հոգով և սրտով:

Ինչ և իցէ, հասարակական հիպնոտիսմի գլխաւոր ուսումնասիրողները—Տարդը, Ժոլլին, Բորդիէն և իտալական դպրոցը.—Սերգին, Սեգելէ և ուրիշները միաձայն ընդունում են, որ չափումն գէպի օրինակումն մարդու հոգեբանութեան հիմքն է, այդ նրա «հոգեկան կեանքի» հիմնական օրէնքն է», ինչպէս ասում է Տոկարսկին: Այս մի անդիմադրելի պահանջ է մարդու համար:

«Ամեն մարդ տրամադիր է օրինակել ուրիշներին, և այս ընդունակութիւնը սաստկանում է երբ մարդիկ խմբւած են» (Բորդիէ): Տարդը ասում է. «Մարդու չափումն գէպի նմանողութիւնը, նրա բնութեան ամենախոշոր գծերից մէկն է»:

«Ամբողջ աշխարհ, ասում է Սիգելէն, ինչպէս ամենալուրջ, նոյնպէս և ամենաթեթեամիտները, ծերերը և երիտասարդները, ամենազարգացած և ամենատգէտ մարդիկ—ամենքը շատ ու քիչ բնազդւածով օրինակում են, իւրացնում են իրանց լսածը, տեսածը, սովորածը»:

Շատանում ենք այս հեղինակաւոր գիտնականների կարծիքով:

Նմանողութիւնը հնարաւոր է ալն ժամանակ միայն երբ ընդօրինակողի և օրինակի մէջ մի որ է տարբերութիւն կալ: Բայց ինչ է ալդ օրինակը, եթէ ոչ նոյն իսկ ներքնչող, հիպոստոզ անձն: «Նմանողութիւնը ոչ ալ ինչ է եթէ ոչ ներշնչումն, ալ ինքն հիպոստոսմ, ասում է Տարղը: Մի մարդու որ և է չտակութիւնը հարւածում է մեզ, մեխում է իր վրա մեր ուշադրութիւնը, ուրիշ խօսքերով—ապշուրթ և ան մէջ է քցում, հիպոստոսմ է մեզ, և մենք անզիտակցաբար չափշտակւում ենք ալդ մարդով և աշխատում ենք նմանել նրան:

Այս տարբերութիւնը մարդկանց մէջ կարող է մեծ կամ փոքր լինել: Եթէ նա մեծ է, հիպոստոսմն չանկարծակի է լինում, և ալն դէպքում ընդօրինակումն արագ, ստիպողական է դառնում: Նրեակալենք մի անձն, որը չանկարծ ընկնում է մի երկիր, որտեղ կեանքը միանգամայն տարբեր է իր մինչև ալթմ տեսած կեանքից: Ալդ մարդը իսկոյն իրան օտար է զգում, նա անդադար հիպոստոսմն մէջ է և անդադար ձգտում է նմանիլ իր նոր շրջանի մարդկանց: Բայց որչափ աշխատանք է հարկաւոր նրան դրա համար և որքան ուժ է կորցնում նա ալս գործում: Այն դէպքեր, երբ ալս մարդը ընկնում է, նրա ուժերը սպառւում են և նա կորչում է, անհետանում...

Այս է կեանքի կռիւը... Այս է ալն մեծ օրէնքի հիմքը, որով ոչկուտուրական ազգերը կորչում են, երբ նրանց տիրապետում են քաղաքակրթւած ազգերը: Գարւինի դրած մեծ օրէնքը հասկանալի է դառնում մեզ Ուժեղը (Ֆիզիքապէս, թէ բարոյապէս) կլանում է թուլին, միայն ալն պատճառով, որ ալք երկուսի մէջ տարբերութիւնը մեծ է և որ ժամանակ չի տրւում թուլին հանդարտ

վամաց ընդօրինակումով հասնել ուժեղին: Բայց ալս մասին չետու:

Նւ, ճշմարտ որ, ամբողջ ազգեր անհետանում են ալս կուր մէջ: Բաւական է լիշել Ամերիկայի հնդիկներին: Այս երկրներում քաղաքակրթ ազգերը չանկարծ տիրապետեցին կիսավայրենի ցեղերին և կլանեցին նրանց, ժամանակ չտալով զարգանալ և իրանց հասնել:

Եթէ Հալ ազգը կարողացաւ պահպանել իր գոյութիւնը,—գրա պատճառն անտարակոյս ալն էր, որ նա միշտ չըջապատւած է եղել ալնպիսի ազգերով, որոնք քաղաքակրթութիւնով իրանից շատ բարձր չեն, գուցէ և աւելի ցած են եղել: Նւ իբրեւ ապացոյց առաջ բերենք Ղեհաստան գաղթած հայերին, որոնք իրանցից շատ աւելի քաղաքակրթւած երկիր ընկնելով անհետացան:

Ուրիշ կերպէ լինում, երբ մի ազգ միջոց և ժամանակ է ունենում կամաց-կամաց ընդօրինակման (ուրիշ խօսքերով քաղաքակրթութեան) աստիճաններով բարձրանալու: Ընդհակառակը, ալդ դէպքում, երբ օրինակի և ընդօրինակողի մէջ եղած տարբերութիւնը փոքր է, նմանողութիւնը զիւրին է լինում և քիչ ուժեր են վատնւում ալդ գործում: Մի օրինակ կը լուսաբանի մեր միտքը:

Եթէ մի անուս մարդու ստիպեն համալսարան չափել, նա անասելի ձիգ պէտք է թափի, որպէս զի ըմբռնի գիտութիւնները, և գուցէ ալք նրան երբեք չալողի, ալն ինչ եթէ նոյն գրութեան մէջ դնենք մի պատրաստւած անձն, օրինակ գիմնազիան աւարտած մէկին, սա անհամեմատ աւելի քիչ ուժ կը վատնի և կարճ ժամանակ գործ կը դնի նոյն նպատակին չասնելու համար: Ահա թէ ինչ է ալսպէս ասած անհատական ընդօրինակումն:

Բայց քանի որ մարդիկ խմբովին են ապրում, հետևաբար մի որ և է անձնաւորութիւն կարող է գրաւել, հիպնոսել, ուրիշ խօսքերով, օրինակ դառնալ ոչ մէկին, ալ մի քանիսին, մի ամբողջ դասակարգի, մի ամբողջ հասարակութեանը: Հայրը հիպնոսում է և ներշնչման ներքո է պահում իր զաւակներին, որոնք աշխատում են ընդօրինակել նրան, ուսուցիչը օրինակողների աւելի մեծ շրջան ունի, հրապարակախօսը աւելի ևս մեծ և ալն: Բարձրանալով ընդօրինակման սանդուխտները, մենք կը հասնենք այն առերես անհասկանալի երևոյթին, երբ ամբողջ ազգեր, ինչպէս մի մարդ, անձնատուր են լինում մի անձնաւորութեան հիպնոսման, սեւեռելով նրա վրա իր ամբողջ ուշադրութիւնը, ինքնամոռացման հասած, գորեղ թուլութեան ներքոյ:

«Եւ քանի քանի մեծ մարդիկ Ռամզեսից սկսած մինչև Ալեքսանդրը Մեծը, Ալեքսանդրից մինչև Մահաթ-մէդը, Մահաթմէդից մինչև Նապոլէոնը, հմայել են աչքս ազգերի հոգին! Քանի քանի անգամ աչքերը փառքի կամ հանճարի վրա սեւեռած, ամբողջ ազգեր քարացման մէջ են ընկել: Աչքս, աչքս դարի սկզբին բոլորովին քարացած և մի և նոյն ժամանակ փերին աստիճանի չուղման հասած, պատերազմատէր Ֆրանսիան հպատակում էր իր կաշեերական հիպնոտիզորի (Նապոլէոնի) մի շարժումին և հրաշքներ անում: Աչք երևոյթը դարձնում է մեր ուշքը անցեալի խորքերը և հասկանալի է անում մեզ այն մեծ կլիստառասպելական անձնաւորութիւնների գոյութիւնը, որոնք այնպիսի ազգեցութիւն են ունեցել իրանց ժամանակակիցների վրա, և որոնց ազգերը զնում են իրանց պատմութեան սկզբին» (Տարդ):

Պատմութեան մէջ «մեծ» մականունը կրում են աչք մարդիկ, որոնք հիպնոսել են ամբողջ ազգեր և իրանց

ետեից քարշել: Կա՞յ արդեօք մի պատմական շրջան, որի մէջ այսպիսի վիթխարի անձնաւորութիւններ չլինէին? Կրօնական շարժումներ, քաղաքական, հասարակական լեզափոխութիւններ, պատմութեան բոլոր խոշոր գէպքերը կատարել են այս օրէնքի գորութիւնով: Մարդիկ ոչխարների նման հետեւել են իրանց հմայողին, զուրկ կամքից, միմիայն հպատակման և նմանողութեան անձնատուր եղած!

Արեւելեան բռնակալների սոսկութիւնները չեն վրդովում անգամ հիպնոսած ժողովրդին: Միլիոնաւոր մարդիկ հետեւում են մի Չինկիգ խանի, մի Աղէքսանդր Մակեդոնացու, մի Նապոլէոնի, պատրաստ ամեն բոլոր իրանց կեանքը զոհելու լաճախ անչափ նպատակի համար...

Բայց մարդիկ չեն միայն, որ հետեւում և ընդօրինակում են ներշնչում իրանց շրջապատողներին,—մի որ և է գործ, մի որ և է գաղափար կարող է նոյնպէս լափը տակման հասցնել ամբողջ ազգեր: Շեքսպիրի դրամաները, Ռաֆայէլի նկարները, Բեթհովենի երաժշտութիւնը անշութեան մէջ են քցել մարդկութիւնը ամբողջ դարերով: Ամբողջ միջին դարու գիտութիւնը կաշանում էր Արիստոտէլի և մի քանիսուրիշ հին փիլիսոփաների զրած.քնելին բացատրութիւնն և ր տալու մէջ!... Եւ քանի քանի հաղարներով են զիզւել մարդկութեան գլխում այն սնապաշտութիւնները, այն անմիտ գաւառանքները, որոնք խորհող մարդու մէջ միայն ծիծաղ կարող են չարուցանել!

«Բայց ինչ հարկ կա՞ պատմութիւնը քրքրել? Բացականչում է Տարդը.—նաեւք մեր շուրջը: Մէկը չփոթւում է հասարակութեան մէջ, կամ մի ուրիշի հաշեացքից և չանկարծ նրա մտքերը խառնում են, նրա լեզուն ու ձեռները կապ են ընկնում և նրա ամբողջ մարմինը մի օտարօտի քաղքալման մէջ է ընկնում: Գուցէ

համաձայնեն ինձ հետ, եթէ ասենք, որ այս դրութիւնը, որի մէջ մենք ամենքս երբ և իցէ գտնուել ենք որոշեալ հասակում, սաստիկ նման է սոնամբուլիս մի (լուսնոտութեան) դրութեանը: Բայց երբոր այս վախը անցնում է և այդ անձն իրան միանգամայն վտահ է զգում, այդ նշանակում է արդեօք, թէ նա հիպնոսից դուրս է եկել? Ամենեին ոչ: Մի հասարակութեան մէջ իրան ազատ զգալ — այդ նշանակում է տիրապետող տրամադրութեանը չարմարել, խօսել նրա բնորոշ լեզուի, ընդօրինակել ներկայ եղողների լառու վատ ձեւերը և, վերջապէս, անարգել անձնատուր լինել բազմատեսակ ներգործութիւնների շտանքներին, որոնք շրջապատում են մեզ, որոնց հետ մենք ի դուր կուգամ էինք առաջ, և աչն աստիճան հլու դառնալ այս ամենին, որ մարդ կորցնի իր դրութիւնը զգալու ընդունակութիւնն անգամ: Նւայս է իսկապէս աչն զարմանալի կուրուքեան պատճառը, որ մարդիկ կարծում են, թէ իրանց գործերը կամաւոր են և ինքնուրոյն: Բայց այսօր խօսել ազատ կամքի, ինքնուրոյնութեան մասին աչ ևս անկարելի է: Մարդս ազատ չէ, նա հլու գերի է շրջապատող հանգամանքներին և չաճախ նա չարիշտակման մէջ կատարում է աչնպիսի բաներ, որոնց, եթէ ինքնուրոյն լինէր, չէր կարող կատարել:

Մի չալտնի միտք, մի ձգտում, չուզմունք կարող է չանկարծ մէկից անցնել մի քանի ուրիշ մարդկանց և, աչպէս ասած, վարակել նրանց և աչս ժամանակ առաջ է դալիս հաւաքական նմանողութիւն:

Աչպիսով բացատրում են աչն զէպքերը, որոնք չալտնի են գիտութեան մէջ ներդաւիւն վարակումն անունով, և որոնցից ամենանշանաւորները մենք առաջ բերեցինք անցեալ գլխի մէջ:

Հիւանդական ընդօրինակման մի շարք զարմանալի զէպքեր արձանագրում են մեզ հեղինակները: Մեզի աչջիւղները կախում են մէկը միւսից վտու: Յալտնի ֆրանսիական հոգեգէտ Ղգրան Գիւստը առաջինը նկարագրեց աչն զարմանալի վարակումն, որի շնորհով երկու մարդ մի տեսակ ներգալին հիւանդութեան տէր են դառնում: Մէկը միանգամայն իշխում է միւսի վրա, որը կապիկի նման օրինակում է առաջինին: Աչս հիւանդութիւնը չալտնի է զուգական խելագարութիւն անունով (folie à deux): Աչս զուգական խելացնորութիւնը կարող է դառնալ երեք, չորս և հինգ մարդի խելացնորութիւն: Կնւալիդներ (հին գինւոներսի անկեւանդը) մի դուռ կար, որից կախում էին հին գինւորներ: Մի անգլիացի իրան Վեդուլիալի հրաքուխի անգունդն է քցում, և շատ ուրիշներ հետեւում են նրան: Իր չօղածի մէջ Տոկարսկին պատմում է, թէ շոր Աալեդոնիա աքսորած տաժանակիրների մէջ ինքնատանջման սարսափելի համաճարակ երեւեց: — չալտերը փութում էին իրանց աչքերը, միւսները կտրում էին իրանց թեւերը և ոտները և չօղան էին անում իրանց անդամները:

Վերջին տարիներս ամբողջ աշխարհ սարսափի մէջ քցող անարխիստները, իրանց սոսկալի ոճիրներով, անտարակոչ նույն ձեւի հիպնոսական և նմանողութեան օրէնքների մի խոշոր հիւանդական արտաչալտութիւն են:

Ահա հիւանդական նմանողութեան մի քանի զէպքեր, բայց որչալի բազմակողմանի են հաւաքական ընդօրինակման առօրեալ զէպքերը և որչալի կարեոր է նրանց ուսումնասիրութիւնը:

Յրանսիալի չալտնի մարդաւան Տարդը ուսումնասիրում է աչս խնդիրը մի նշանաւոր, արդէն զասա-

կան դառած, աշխատութեան մէջ ¹⁾, որին կը հետեւենք մենք:

Մինչև այժմ մենք ենթադրեցինք, թէ մարդիկ ձգտում են նմանել մի անհատի, ընդօրինակելով նրա ձևերը, տարազը, մաքերը, չափումները և այլն: Այսպիսի մարդիկ արտակարգ անձնաւորութիւններ են լինում:—հերոսներ, մեծ գահակալներ, քարոզիչներ, լեղափոխիչներ և այլն: Այս դէպքերում ամբողջ ազգեր ապշութեան մէջ են ընկնում և կուրացած հետևում են մի որ և է զօրեղ անհատի աղբ օրինակումն արձանագրւում է պատմութեան էջերում խոշոր գծերով:

Բայց այս խոշոր երևութիւններով չի սպառւում ընդօրինակումն մարդկանց մէջ:

Ընդօրինակումն ընդհանուր է և փոխադարձ, այս է Տարդի հասարակական մեղմ և կանոնաւոր զարգացման օրէնքը:

Մարդիկ իրանց նմանողական բնութեան շնորհով չափշտակւում են և հետևում ոչ միայն վերև չիշած մեծ հերոսներին և հանճարներին, այլ և անխտիր բոլոր իրանց չըջապատող անհատներին:

Մեր իւրաքանչիւրիս ամեն մի գործողութիւնը ներշնչում է մեզ չըջապատողներին համարեա անդիմադրելի մի ձգտումն՝ անպատճառ նմանել մեզ, իսկ եթէ երբեմն սրանք զիմադրում են աղբ ցանկութեանը, դրա պատճառն այն է, որ նրանց մէջ չարում են առաջ ստացած հակառակ ներշնչումները, որոնք և արգելք են դառնում նոր ներշնչման իրագործմանը: (Տարդ):

¹⁾ Les lois de l'imitation.

Այսպէս, հասարակութեան իւրաքանչիւր անդամ ներշնչող կամ օրինակ է դառնում իր որ և է չատկութեան շնորհով միւս անդամներին, և փոխարինաբար ինքը ներշնչողից դառնում է ներշնչող, այսինքն՝ նա եւ ուրիշներին է ընդօրինակում: Այս է այն փոխադարձ ընդօրինակման օրէնքը, որը և կազմում է հասարակական կեանքի մեղմ և կանոնաւոր զարգացման գործոնը:

Եւ այս տրիտուր ընդօրինակումն կատարւում է շնորհով այս տարբերութիւններով, որոնք միշտ գոյութիւն ունեն միևնոյն հասարակութեան բոլոր անդամների մէջ: Անկարելի է գտնել երկու անձնաւորութիւն անգամ, որոնք միանգամայն նման լինէին միմեանց, թէ ֆիզիկապէս, թէ բարոյապէս, թէ մտաւորապէս: Եւ այս հասկանալի է, քանի որ մարդուս ֆիզիկական և բարոյական կազմութիւնը հետեանքն է ոչ միայն նրա դաստիարակութեան, նրա ուսման, այլ և նրա ժառանգականութեան: Ամենաշնչին ասարբերութիւնը կրթութեան մէջ, ամենաանշան, երբեմն աննշմարելի զանազանութիւնը կեանքի պայմանների մէջ, տարբերութիւն է մտցնում նաեւ երկու, առերես միանգամայն համանման, անձերի մէջ: Ահա այս թուլ զանազանութիւնն է, որը հասկանալի է դարձնում մեզ փոխադարձ օրինակման գոյութիւնը. նոր գիտութիւնները, նոր գիւտերը, նոր գաղափարները, նոր տարազը, նոր ձևերը և այլն զարմանալի հեշտութիւնով են տարածւում և ժողովուրդը շատ արագ ընտելանում է նրանց: Եւ այս կատարւում է այն օրէնքի հիման վրա, որը նկատւում է արեւստական հիպնոսիսի մէջ: Այս օրէնքը հետեալն է.—որքան չաճախ հիպնոսի մէջ գցենք մի մարդու, այն քան աւելի կը հեշտանա նրան քնեցնելը և ներշնչումն եր անելը: Մենք գիտենք

այս աշխատութեան առաջի մասից, որ մարդիկ չաճախակի հիպնոսումներից չեստ, այն աստիճան թուլանում են, որ բաւական է ասել նրանց «քնիր» — և նա անմիջապէս քնածութեան մէջ կ'ընկնի և ներշնչումներ կ'ընդունի: Նոյնը կատարում է և քաղաքակիրթ հասարակութեան մէջ: Նրա անդամները, իրանց ծննդեան օրից անդադար ներշնչման մէջ լինելով, այն աստիճան ընտելանում են ներշնչում ընդունելու և օրինակելու, որ նորութիւնների նմանողութիւնը կատարում է, այսպէս ասած, ինքն իրան:

Սակայն մի պայման կա, որը ակներև է անում Տարդը և որի բացադրութիւնը նոյնպէս տալիս է մեզ արեւստական հիպնոսումի ուսումնասիրութիւնը, այն է, որ հասարակութեան մէջ տարածւում են միմի աչն աչն նորութիւնները, որոնք էն հակասում նրա գաղափարներին, ալլ համապատասխանում են նրանց: Նոյնը նկատում է և արեւստական հիպնոսի մէջ. — մի ֆակտ, որը ապացուցեցին Նանսիի գիտնականները, — եթէ մի սոնամբուլի աջնպիտի ներշնչումն անէք, որը հոկառակ է նրա կըրթութեանը կամ նրա բարոյական գաղափարներին, դուք մի սարսափելի ներքին պատերազմ կը լարուցանէք նրա մէջ. — պատերազմ ձեր պահանջը կատարելու և նրա բարոյական գաղափարների մէջ, և նա չի կատարի ձեր ներշնչումն: — Հասարակական հիպնոսի մէջ ալ տալի պարզ է:

Օրինակ. անկարելի կը լինի ընդունել տալ մեր հասարակութեանը մարմոնների բաղմակնութիւնը: Եթէ մի խելագար կառավարութիւն փակէր բոլոր դպրոցները և արգելէր ժողովրդին ուսում առնել — անտարակոյտ ալլ պիտի մի տէրութիւն մի օր անգամ կարող չէր գոյութիւն ունենալ: Այն ինչ, երբ հասարակութիւնը հաստ-

նացած է մի նորութեան համար, մի կալծ միայն բաւական է, որ վստումն տեղի ունենայ:

Այսպէս են բացադրում խաչակրութեան ծագումն, ֆրանսիական մեծ չեղափոխութիւնը, մեծ ժողովրդական շարժումները և կառավարչական բարեփոխումները, որոշեալ բարոյութեան ըմբռնումն, որոնցով հիմնում են դաւանութիւնների, եկեղեցիների, ընկերութիւններ և ալլ և ալլ:

«Պատմութիւնը, ասում է Տարդը, գիտնականների կարծիքով, մի ժողովածու է փառաւոր գործերի, իսկ մենք աւելի տրամադիր ենք ասն ու. — աջնպիտի գործերի, որոնք ամենից աւելի չաջողութիւն են ունեցել աշխիքն, աշխարհի նորութիւնների, որոնց ամենից շատ ընդօրինակել են: Մի օր և է մեծ չաջողութիւն ունեցող ֆակտ կարող է բոլորովին փառաւոր չլինել — օրինակ, մի օր և է նոր բառ, որը մոցնում է լեզուի մէջ և տիրապետում է նրան — ոչ ոքի ուշադրութիւն չի գրաւում: Նոյնպէս աննկատելի է անցնում և մի նոր միտք կամ կրօնական մի նոր ծէս, որոնք կամաց-կամաց առանց աղմուկի մտնում են ժողովրդի մէջ, կամ մի արհեստի վերաբերեալ բարեփոխումն, որի հնարողը անչափ է մնում»:

Պատմութեան նպատակը պիտի լինի մարդկութեան հոգեբանութեան ուսումնասիրութիւնը պատմական ժամանակամիջոցում, ինչպէս նախա-պատմական շրջանների մարդկանց հոգեբանութիւնը ուսումնասիրելու համար մենք զիմում ենք հնագիտութեանը:

Այս հիման վրա պատմութեան համար ահագին նշանակութիւն են ստանում ժողովրդական չեղափոխիչների, գահակալների, գիտնականների, մի խօսքով ալլ բոլոր անձերի հոգեբանութեան ուսումնասիրութիւնը, որոնք մի նորութիւն են մոցել կամ մարդկութեան մէջ ստիպելով նրան հետեւել իրանց:

Այն դերը, որը կատարում է պատմութիւնը պատմական ժամանակների համար, նոյնը անում է հնադրութիւնը նախապատմական շրջանների համար: Անօթ. ների ձևերը, դամբանների շէնքեր, կամ որամեները ցոյց են տալիս, թէ որ աստիճան ընդունելութիւն է գտել այս ինչ նորութիւնը այս ինչ երկրում, կամ քանի ժամանակից փսոսւ աչս ինչ նորութիւն մի երկրից անցել է մի ուրիշ երկիր: Աւ այս դիտողութիւններից կարելի է մօտաւորապէս հետեւեցնել որոշեալ երկիրների քաղաքակրթութեան և նրանց իրար վրա ունեցած փոխադարձ ազդեցութիւնների չափը:

Ահա նմանողութեան զլիսաւոր օրէնքները. նմանողութիւնը հետեւանք է ներշնչման, աշխնքն հիպնոսի. Նա ենթադրում է մի որ և է տարբերութիւն օրինակի (ներշնչողի) և նմանողի (ներշնչողի) մէջ: Որքան մեծ է այս տարբերութիւնը, այնքան զգաւար է օրինակումն:

Հասարակական կեանքի մէջ ամեն մէկը համ ներշնչող է համ ներշնչուող, ուրիշ խօսքերով. հասարակութեան իւրաքանչիւր անդամ օրինակ է աւնում ուրիշներից այն բաները, որոնք իրան պակաս են:

Այս է փոխադարձ նմանողութեան մեծ օրէնքը, որով շարունակ կատարւում է մարդկանց հաւասարումն: Եւրոպական ազգերը այժմ համարեա բոլորը նոյն աստիճանի քաղաքակրթութեան են հասած: Ամեն տեղ նոյն գիտութիւնները, նոյն արհեստներն են տարածւած, նոյն քաղաքակրթութիւնը, նոյն ձևերը և նոյն տարազն է տիրում. նոյն գաղափարները, նոյն ձգտում ներքը, նոյն իդէալներն ունին համարեա բոլոր այդ ազգերը: Այս մի ահագին հասարակութիւն է, որը տարի-

ների ընթացքում չաճախ հաղորդակցելով միմեանց հետ, ընդօրինակել են միմեանցից այն շատկութիւնները, որոնցից իրանք զուրկ են եղել, տաացել են նոյն ձևի կըրթութիւն, մնել են նոյն գաղափարներով և գնալով մօտեցել են միմեանց և նմանել իրար: Ուր մնացին հին դարերի կիսավաչրների ազգերը, սրունք նոյնպէս տարբեր էին միմեանցից իրանց հասարակական կենցաղավարութիւնով: Ուր են միջնադարեան հարկւրտուր տարբեր ցեղերը և հասարակութիւնները, որոնցից իւրաքանչիւրը իր սեփական կեանքն ունէր: Մանր ազգութիւնները կորցրին իրանց աւանձնատկութիւնները քաղաքակրթական դրօշակի ներքոյ, ընդօրինակման ուժով և, ով գիտէ, զուցէ անցնեն դարեր, և լուսաւորութիւնը այնքան մօտեցնի մարդկանց, որ հասնի բանաստեղծի երազած դարը, երբ պիտի կորչեն ազգութիւնների և կրօնի խտրութիւնները և ամբողջ մարդկութիւնը ձուլի մի վիթխարի ընտանիքի!...

Սակաչն, որքան էլ մօտենան միմեանց մարդիկ, որքան էլ հաւասարեն նրանց բարոյական և մտաւոր աշխարհները, երբէք նրանք չեն միակերպւիլ և միշտ կը մնալ նրանց մէջ այն փրկարար տարբերութիւնը, ի հարկէ շատ նւազած, առանց որի անկարելի է օրինակումն և հետեաքար առաջադիմութիւնը, որովհետեւ այն ժամանակ կը կորչի իդէալը և կը զաղարի մրցումն:

Երբէք մարդիկ չեն միակերպւիլ, որովհետեւ բացի կրթութիւնը, բացի քաղաքակրթութիւնը, կաջ նաև հողի, կլիմայի ազդեցութիւնը, որը տարբեր է կացուցանում մարդկանց, — կաջ նաև ժառանգականութեան մեծ օրէնքը, որը իր ինքնուրոյնութեան կնիքը միշտ դրոշմած է պահում քիւրաւոր սերունդների ճակատին:

ԳԼՈՒԽ Բ.

ԱՄԲՈՒԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Ամբոխը աւելի տրամադիր է դէպի
չարը, քան դէպի բարին:

Սէֆէ:

Անհատը և խումբը հոգեբանութեան տեսակետից: — Խմբային վճիռները և գործերը: — Պատահական հաւաքումներ կամ ամբոխ: — Ընդօրինակումն ամբոխի մէջ: — Ամբոխի տրամադրութիւնը դէպի չարութիւն, նրա պատճառները: — Չարագործներ և թույլ կամներ: — Վատտեանի դէպքը: — Արեւմտեան բարոյական մարդիկ և բնածին չարագործներ ամբոխի մէջ:

Հասարակութիւնը կազմած է անհատներէր, հետեւաբար բնական էր կարծել, որ հասարակութեան, ամբոխի բնաւորութիւնը գումարումն է նրան կազմող մարդկանց բնաւորութիւնների, ինչպէս ջրի շատկութիւնները գումարումն են կաթիլների շատկութիւնների:

Այս թէօրիան աշխարհ պարզ էր և հասկանալի, որ նա մինչև վերջին ժամանակներս բնորոշւում էր իբրև մի անհրաժեշտ ճշմարտութիւն նոյն իսկ աշխարհի խորհողներից, ինչպէս է Սպենսերը:

Նթէ ապ հալեցակէտից նախելու լինինք հասարակութեան գործերի, ամբոխային շարժումների վրա, պէտք է ենթադրենք, որ նրանք գումարեն անհատական շարժումներին: Այսպէս ուրեմն, մի խումբ դիմապատկերի մի որ և է որոշումն նրանց կարծիքների գումարման արդասիրտ է, և որքան էլ մեծ լինի ազդ գիտնականների

թիւը և բարձր նրանց գիտութիւնը, աշխարհ խելացի պիտի լինի նրանց որոշումն:

Ասկաջն նորագոյն հետազոտողները, որոնք զբաղւել են հասարակութեան, ամբոխի (massa) ուսումնասիրութիւնով, նկատել են ազդ թէօրիալի թերութիւնը:

Պատահում է լաճախ, որ աշխարհի ժողովների որոշումները զարմանալի կերպով միամիտ և սխալ են լինում և բոլորովին չեն կարող համարել ազդ մարդկանց խելքերի գումարալին արտապատութիւնը:

Ազդ բաւական չէ: Մարդիկ խմբովին երբեմն աշխարհի գործեր են կատարում և աշխարհի վճիռներ են կաշացնում, որոնք չեն համապատասխանում մինչև անգամ ազդ խմբի իւրաքանչիւր անգամի զարգացման:

«Միացրէք 20—30 Գիթէններ, Կանտեր, Հելմհոլցներ, Նիւտոններ և ուրիշ նրանց նման հանճարներ, առում է Նորդաու (Nordau), և առաջարկեցէք սրանց գործնական առօրեալ խնդիրներ և կը տեսնէք, որ նրանց որոշումները ոչինչով չեն տարբերւի պատահական մարդկանցից բազկացած մի ժողովի որոշումից, թէև նրանց ճառերը աւելի իմաստալից լինէին: Ինչո՞ւ, որովհետև ապա 20—30 ընտրովի անձներից ամեն մէկը, բացի իր անձնական շատկանիւնները, որոնցով նա տարբերւում է միւսներից, ունի և մի շարք թէ ժառանգական և թէ ցեղային շատկութիւններ, որոնք նրան մօտեցնում են փողոցային զատարկաշրջիկներին: Կարելի է ասել, որ բոլոր մարդիկ բնական զրութեան մէջ ունին որոշեալ նշաններ, որոնք չատուկ են ամենին: Այս ընդհանուր շատկութիւնները, ենթադրենք, թէ հաւասար են X-ի, իսկ անհատական շատկանիւնները—ա, բ, գ, դ-ի և այլն, աշխարհ աշխարհ տարբեր շատկութիւններ, որքան մարդիկ կան մի որոշեալ ժողովի մէջ: Հիմի հասկանալի է,

թէ մինչև անգամ ամենաընտիր մարդկանց ժողովում, որը օրինակ, բաղկացած կը լինի 20 անձերից, մենք կ'ունենանք 20 X և միաջն մէկ Թ, մէկ Բ, մէկ Գ և այլն: Ակներն է, որ 20 X անպատճառ կը չաղթեն ա-ին, բ-ին և այլն, որը նշանակում է, թէ համամարդկային չատկութիւնները կը չաղթեն միշտ անհատականին և թէ բան-ւորի փափախը կը ծածկի բժշկի ու փիլիսոփայի գտակ-ները:

Աւրեմ, Նորդաուի մաքով, իւրաքանչիւր անհատ, ինչ զարգացման էլ հասած լինի նա և ինչ դասակարգի էլ պատկանի, ունի երկու տեսակ հոգեկան չատկութիւն-ներ:—մէկը չատուկ է բոլոր մարդկային էակներին, իսկ միւսը նրա անհատական չատկանին է, որով նա տար-բերում է ուրիշներից: Հասկանալի է որ առաջին կարգի չատկութիւնները գումարելով կազմում են մի մեծ ուժ, որը մի ժողովի մէջ միշտ կը չաղթի անհատական ճշգ-տումներին:

Նորդաուի այս խօսքերից, ասում է Սիգելէն, հէշտ է հասկանալ, թէ ինչու ոչ միաջն երգեալ դատաւորները (суды присяжных) և կոմիսիաները, այլ և քաղաքա-կան ժողովները կատարում են աջնախի գործողութիւն-ներ, որոնք անպատճելի կերպով հակասում են այս ժողով-ներ կազմող անդամների հաշտացրելուն և սկզբունքնե-րին: Այս բանը հասկանալու համար, բաւական է Նոր-դաուի առաջ բերած օրինակում 20-ի տեղ դնել 100 կամ 200. հին առածն ասում էր՝ Senatores boni viri, senatus autem mala bestia. (Սենատորները չարքելի ան-ձեր են, իսկ սենատը վատ կենդանի է):

Եթէ աչպէս է լինում միակերպ մարդկանց ժողով-ներում, ինչպէս են գիտնական ժողովները, դատարան-

ները, կոնգրեսները, ապա որքան իրաւացի է աչք օրէն-քը, երբ հարցը վերաբերում է աչպէս կոչւած պատա-հակ անհաւաքումներին: Պատահական ժողով-ները բաղկանում են տարբեր զարգացման, տարբեր և չաճախ հակասող գաղափարների տէր և տարբեր շրջան-ների պատկանող մարդկանցից, ինչպէս են թատրոնների, զանազան հասարակական տեղերի ժողովները, միտինգ-ները,—այս տեսակ անձերից բաղկացած ժողովները չաչտնի են ընդհանուր կոչումով—Ամբոխ (Foule): Ամ-բոխը նմանում է մի վիթխարի էակի, որի մէջ կորչում են անհատների հոգիները, ինչպէս մի բարդ գոյնի մէջ կորչում են նրան կազմող սկզբնական գոյները:

Այս է պատճառը, որ չաճախ ամբոխի որոշում-ները ու գործողութիւնները սարսափ և զաւրուցիւն չա-րուցանում՝ ոչոք աչք ամբոխի իւրաքանչիւր անդամի վրա, երբ սա սառնութիւնով քննում է իր մասնակցութիւ-նով կատարւած անմիտ և սոսկալի եղելութիւնները: Ահա թէ ինչի Սեգելէն առաջարկում է հիմնել մի ա-ռանձին գիտութիւն ամբոխաչին հոգեբանու-թիւն անունով, ինչպէս կալ անհատական հոգեբանու-թիւն:

Հաւաքական նմանողութեան օրէնքը ամբոխաչին չարժեւորները մեծ դործօնն է, միաջն ամբոխի մէջ աչս նմանողութիւնը կատարւում է զաւրմանալի աբազութիւնով: Բոլոր հեղինակները, Բօրդիէից սկսած, մատնացող են անում այս ֆակտի վրա: Ֆերրին, Տարդը, Սիգելէն առանձին ուշադրութիւն են դարձնում զրա վրա: Հասարակական լեզուով աչք կոչւում է ամբոխի վարակումն, չափշտակումն:

Այս երևույթները լաւ լուսաբանւած են Սիգելէի բրբրում, որին մենք կը հետեւենք:

Նախ և առաջ ինչպէս պէտք է բացազրել ամբոխի այս լաւ կարծակի վարակումն:

Նոյն ներշնչման մեծ օրէնքը տիրապետում է աչտեղ ևս: Ամբոխի մէջ մարդս ամեն տեսակ ներշնչումներ է ստանում շատ կարճ միջոցում, ներշնչումներ լսողական (ձառեր, բացականչութիւններ, երգեր), տեսողական (զանազան շարժումներ, ժեստեր):

Այս ներշնչումները բաւական են, որ ամենասառնարին մարդու չափաւորման հասցնեն և նրան աջակցի բաներ անել տան, որոնցից չետող նա ինքն էլ կը փռմանի: Ամենապարտի երևույթը աչապիտի խմբովին չափաւորման նկատում է օր. թատրոններում: Բոլորը գիտեն, որ ծափահարութիւնը վարակիչ է:—Ծափի ձայնը, մարդկանց ձեռներէ շարժումները, նրանց դէմքի արտապայտութիւնը գրգռում է միւսներին, ոգեւորում է նրանց և նոյն գործողութիւնն է ներշնչում: Նոյն կերպով է բացազրում և ամբոխային գործողութիւնները, ինչպէս են պատերազմները, որտեղ մարդիկ ինքնամոռացման չափ չափաւորման են հասնում, և ալլը:

Տարդի խօսքերով, հասարակութիւնը կարելի է նմանեցնել հանդարտ լճի, որի մէջ երբեմն քարեր են քցում: Ալիքները լայնանում են, տարածւում են, հեռանում են միշտ աչն կէտից, որտեղ քարն ընկաւ, մինչև որ հասնում են ափերին: Այսպէս տրամադրւած ամբոխի մէջ մի բառ է ընկնում և աչգ դառնում է աչն քարը, որը ալեկոծում է ծովը:

Նոյն միտքը չափում են ուրիշ գիտնականներ, որոնք համեմատում են ամբոխը վառօդի հետ, որը կը

բռնկի խոկոն, եթէ նրան մի կալծ մօտեցնեն. աչս պատճառով ամբոխի որոշումները և գործերը չաճախ (եթէ ամբոխը նախապէս պատրաստւած չէ մի որ ևէ որոշման համար) պատահական բնուորութիւն են կրում, որովհետեւ կախումն ունեն պատահական դէպքերից: Քանի որ ամբոխը շատ հեշտ ենթակալ է ներշնչումների, նա կարող է չափաւորել մէկի մի խօսքով, մի շարժումով, որը կը դառնալ վառօդը պալթեցնող կալծը:

Մի եզրորդ նշանաւոր կէտ ամբոխի հոգեբանութեան մէջ—աչն է, որ ամբոխը աւելի տրամագիր է դէպի չարը քան բարին: Հասարակ լեզուով այս նշանակում է, թէ ամբոխը աւելի հեշտ հետևում է չար քան բարի օրինակին:

Սիգելէն իր «Յանցաւոր ամբոխ» գրքի մէջ ուսումնասիրում է աչգ վերին աստիճանի կարեւոր ֆակտը:

«Մի խումբ միացնելով բարի մարդկանց, դուք երբեք չառ լաւ հետեւանքների չէք հասնի, ասում է Սիգելէն,—չաճախ հետեւանքը միջակ կը լինի, երբեմն էլ շատ վատ»:

«Հերոսութիւնը, առաքինութիւնը, բարութիւնը, չարութեան կէտ, կարող են միաչն անհատների չատկութիւնների լինել, բայց երբեք, կամ համարեա երբեք չեն նկատում մեծ ժողովներում: Ամենաթիկ զիտումն ապացուցանում է մեզ աչգ—ամբոխը միշտ սարսափ է ազդում, ոչ մի լաւ բան սպասելի չէ նրանցից: Ամենքը գիտեն, որ չարագործութեան, խելագարութեան օրինակները կարող են ամբոխին դէպի չարագործութիւն մղել, աչն ինչ շատ հազիւ է պատահում, որ բարի մարդու ձայնը կարող լինի հանդատացնել նրան»:

Աչտեղից Սիգելէն եզրակացնում է թէ՛ «Ամբոխը

մի շրջան է, որի մէջ չարութեան միկրորը չափազանց հեշտ է զարգանում, ահա ինչ բարութեան միկրորը համարեա միշտ մեռնում է»:

Հեղինակները աշխատում են գիտնական բացաղբութիւն տալ օտարօտի, բայց և աջնպէս անհերքելի ֆակտին: Մենք կ'ամփոփենք մի քանի խօսքերով:

Ինչպէս տեսանք, ամբոխը իր գործողութիւնները կատարում է չափշտակման մէջ, մէկի կամ մի խումբ մարդկանց ներշնչումով, ուրիշ խօսքերով թուլութեան, հիպնոսի մէջ, իսկ զիտութիւնը մեղ ուսուցանում է որ հիպնոսական դրութիւնը չարուցանում է մարդու մէջ քնած հոգեկան դրութիւնները:

Ժողին, Բերնհեյմը, Դեպինը, Սիգելէն և ուրիշները կարող էին ուրեմն աչն հզորակացութեան գալ, թէ մարդու հոգու մէջ պահպանւում են դեռ ևս աչն զազանութիւնները, որոնք նրան մօտեցնում են գազաններին և որոնց նա ժառանգել է իր նախահայր գազաններից:

Սակայն մարդու մէջ կան նաև լաւ չափութիւններ: Ինչի ուրեմն միշտ չար չակումներն են չաղթող հանդիսանում?:

Սիգելէն ի միջի ալոց տալիս է սրան և հետեւալ բացաղբութիւնը, որը շատ հիմնական է և չարմարում է հիպնոսական գիտութիւնների ցուցմունքներին:

«Չարութիւնը աւելի ներգործական է (actif, активный), քան թէ բարեսրտութիւնը, որովհետև չար մարդկանց զատակարգը բաղկանում է աչնպիսիներից, որոնք աշխատում են ուրիշներին վնաս հասցնել, աչն քննել ներգործական դեր խաղալ, աչն ինչ բարիները աչնպիսի մարդիկ են, որոնց ցանկութիւնն է

երբէք ուրիշի վնաս չտալ, ուրիշ խօսքերով, սրանք չեզօք մարդիկ են: Այնեւն է, որ միաչն գործունեալ մարդը (ինչ ուղղութիւնով որ լինէր նրա գործունէութիւնը) կարող է ազդել ամբոխի վրա, հետեւաբար և չարերը պէտք է միշտ չաղթող հանդիսանան և իրանց ետեւից քաշեն նոյնպէս և չեզօքներին»:

Անտարակույս, ամբոխի մէջ գտնւում են միշտ մարդիկ, որոնք չեն մասնակցում ամբոխի չարմանը և մինչև անգամ աշխատում են կանգնեցնել նրան, բայց աչնպիսիները շատ սակաւաթիւ են և եթէ կան էլ չեն չանդգնում կատաղի, զրգուած ամբոխին դէմ կենալ, որովհետև իրանք էլ զոհ կը գնան:

Գազանութիւններ կատարող ամբոխը բաղկացած է նախ չարագործներից ու չանցաւորներից և չետոյ—թոյլակամներից, որոնք հեշտութիւնով ընկնում են առաջինների ազդեցութեան ներքոյ, աչն քննել հիպնոսում են նրանցից:

Նկատւած է, որ ամբոխին դէպի սոսկալի ոճիրներ զրդողները չաճախ եղել են հին չարագործներ, կամ աչնպիսի անձինք, որոնք սովոր են արիւն տեսնելու, ինչպէս մտավաճառները, զինւորները, զալլաքները, աչն ինչ թոյլակամների դասը կազմում է կանանցից, թոյլակաղմ և հեշտ չափշտակող երիտասարդներից: Աչն վերջինները աչնպէս չտա և հեշտ թուլութեան մէջ են ընկնում, որ չաճախ հետեւում են իրանց թովողին, կատարում են նրա ցանկութիւնները և անկարող են դառնում փախչել նրանից: Աստեղանի դէպքը մի զարմանալի օրինակ է աչն ձեռն թուլութեան:

Յրանախական գաւառներից մէկում երեւում է մի

գարչելի, կաղ 25 տարեկան մուրացիկան և իջևանում մի
ոմն շիւղի տանը: Ճաշի ժամանակը իր օտարօտի ձեռ-
քով, գաղտնական շարժումներով ահ է գցում տան աղ-
ջկալ, ժողեֆինի սիրտը, որը սկսում է վախենալ նրա-
նից: Հետեւեալ օրը նոյն մուրացիկանը ներս է մտնում,
երբ հալը բացակա է լինում, և աղջկան մենակ գտնե-
լով, նրա շուրջը գծեր է քաշում, խաչակնքում է և ալնո-
կէսօրին ճաշում է նրա հետ և ճաշի միջոցին կատարեալ
ձեռով նշան է անում, իբր թէ բան է գցում նրա դիպի
մէջ: Այն ժամանակ աղջիկը, որը երէկանից արդէն սար-
սափի մէջ էր, ուշագնաց է լինում: Մուրացիկանը առեւան-
գում է նրան, և աղ խեղճ աղջիկը անկարող է լինում
զիմադրել, թէն նա զգում էր, թէինչ է կատարում և
ցանկանում էր արգելել: Ժամը 4-ին թէն ուշքի է գա-
լիս, բայց միշտ թովչութեան մէջ հետեւում է այս գար-
չելի մարդուն, անց է կացնում նրա հետ հետեւեալ գիշերը
մի ուրիշ տեղ և այսպէս գիւղից գիւղ է անցնում նրա
հետ: Ժողեֆինը ողորմ է իր դրութիւնը, զգաւոր է զգում
դէպի իր արարքը, աշխատում է փախչել, իրան ջուրը
նետել, որպէս զի փրկելի, բայց բառական է լինում կա-
տելանի մի խօսքը, մի հայեացքը, որ այս օգորմնի
արարածը հետի նրան: Մէկ անգամ գիւղացիք գուրս
արեցին կատարեալին, և ժողեֆինը կիսամեռ վալը ըն-
կաւ գետին: Վերջապէս չաջողում է նրան փախչել:

1820 թ. Հնդկաստանում ձեռքակալեցին մարդկանց
մի խումբ, որոնք չապտնի էին «երեսալ փախցնող» անու-
նով, վեց տղամարդ և երեք կանանցից բաղկացած:
Սրանք թափառում էին և երեսաներին ստիպում էին
հետեւել իրանց, թովչութեան մէջ գցելով նրանց: Ահա
թէ մինչև որ աստիճանի կարող է կորցնել մարդ կամքը,
թովչութեան ազդեցութեան ներքոյ:

Ճշմարիտ է, մեր բերած օրինակները հարաձուգ օրի-
նակներ են, բայց միթէ քիչ կան մեր մէջ ժողեֆիններ,
գուցէ աւելի մեզմ արտապատութիւններով:

Հասարակութիւնը լիքն է նոյնանման անձնաւորու-
թիւններով, որոնք չունեն կամք, տոկունութիւն, կրի-
տիկական հոգի, և միշտ ընկնում են սրահնա թովչու-
թեան (ուրիշ խօսքերով ազդեցութեան) ներքոյ, — սրանք
խաղալիք են դառնում այն ամեն մէկի ձեռին, ով կա-
մենում է ազդել նրանց վրա: Հիպոստոմն այս մարդկանց
մէջ ծաղրահղութեան է հասած: Սրանք ստորութեւում
են կեանքի մէջ, նաւելով թէ որտեղից է փչում քամին
ու վերջ ի վերջոյ հասնում են այն աստիճան թուու-
թեան, որ զաղարում են որ և է զիմադրութիւն անել
ստացած ներշնչման և դառնում են այն, ինչ որ ժողովրդ-
ական բնորոշ լեզուն դրոշմել է փալաւ անուշով:

Այսպիսի մարդիկ մեծամասնութիւն են կազմում
հասարակութեան մէջ: Այս ողորմելի արարածներն են,
որոնք կազմում են ամբոխների մեծագոյն տարրը և
սրանք են, որոնք հետեւում են սրիկաներին, չարագործ-
ներին և խելագարներին և, հիպոստած, ոճիրներ գործում:

Այսպէս, մարդկային գիտութիւնը ուսուցանում է
մեզ երկու վերին աստիճանի կարեւոր բան:

ա) Ամբոխի մէջ ընդօրինակումն կատարում է դար-
մանալի արագութիւնով: Ուրիշ խօսքերով, — մեծ քանա-
կութիւնով մարդիկ մի տեղ խմբած ժամանակ աւելի
արագ և աւելի հեշտութիւնով են ենթարկւում հիպնոսի,
քան թէ առանձին: Ամբոխի մէջ չուզումները, կրքերը
ալիքների նման լալնանում են, տարածւում, ընդգրկում
են ամենքին բոլակաբար:

և բ) Ամբոխը աւելի տրամադիր է դէպի չարու-

թիւնը, դէպի չանցանքը, քան դէպի բարի գործ:

Մենք տեցինք սրա բացատրութիւնը, կրկնելով գիտնականների կարծիքը, այն է, թէ հիպնոսական դրութեան մէջ չարութեամբ են մարդու սրտում այն գաղանալին կրքերը, որոնք քնած կամ սանձաձ չին արթնութեան միջոցին (Բերնհայն, Բարբաստ, Լաւերն, Սիգիլէ և ուրիշները):

Հետեաբար, պէտք էր ենթադրել որ բոլոր մարդիկ ընդունակ են հիպնոսական դրութեան մէջ ամեն տեսակ չարագործութիւններ գործել: Սակայն այդ օրէնքը ընդհանուր չի կարելի համարել և այս կէտը ուսումնասիրելու արժանի է:

Արթուն ժամանակ մարդու կրթութիւնը ծածկում է նրա այդ գաղանալին կրքերը, և ամեն ահգամ, երբ մարդ գրգռման է հասնում, նրա կրթութիւնը արգելում է նրան չարութիւններ գործել: Այս կրթութիւնն է, որը սանձահարում է նրա կրքերը: Հիպնոսում, ոչնչացնելով այդ ստացական ցատկութիւնը, փշրում է կարծես մարդու սանձը և հաւասարեցնում է նրան վալրենի գաղանի:

Այս է իրողութիւնը, որը ակնհեր է թէ արեւատական հիպնոսի փորձերից և թէ բնական հիպնոսի դրութիւնների զիտումներից:

Սակայն, ինչպէս ասել ենք, այս օրէնքը ընդհանուր չէ և բազմաթիւ ուրիշ օրինակներ և փորձեր ապացուցանում են, որ մարդ, մինչև անգամ հիպնոսական դրութիւնների մէջ, ցածախ չի կատարում իրան անախորժ, կամ իր բարոյականութեան հակասող ներշնչումներ:

Այս իրողութիւնը, ակնհեր է են արել Պարիզի գիտնականները: Նիթէ մի բարոյական կնոջ հիպնոսի մէջ հրամայենք մերկանալ, նա այդ չի անի, իսկ թէ ստիպենք, կը նկատենք նրա մէջ մի ներքին կռիւ արտապա-

տութիւն, կռիւ իր բարոյականութեան և ներշնչման մէջ, և եթէ մենք առաջը չառնենք, այդ կինը սարսափելի կարկամումն կ'ունենալ, կամ եթարգիտի (խորը և երկարատև քնի) մէջ կ'ընկնի:

Փորձերի հիման վրա իրաւունք կալ ասելու, որ եղեռնագործութիւններ կատարողները, եթէ ոչ միշտ, գոնէ ընդհանրապէս պիտի կամ չարագործներ լինեն, կամ խեղադարներ, այսինքն, թուականներ: Եւ մեծ «ամբոխալին ոճիրները» պատմութիւնը ցոյց է տալիս, որ միշտ ամբոխին գլուխ անցնողները եղել են քնածին չարագործներ, որոնք սովորած են արին թափելու:

Նրկիւզալի է այն ամբոխը, որի մէջ այսպիսի անձնատրութիւններ կան, նրանից լաւ բան չի կարելի սպասել և նրա վրա չի ազդի ոչ համոզմունք, ոչ սպառնալիք, ոչ աղաչանք: Աւելորդ է քրքրել պատմութիւնը, բաւական է միայն չիշել այս սոսկալի եղեռնագործութիւնները որոնք միշտ կատարւում են Մահմետի աշխարհերում, որտեղ կեղեքման, աւաղակութեան, սպանութեան վարժած գաղան քուրդը ու թուրքը չեն դադարում XX դարու շէմքին անգամ այնպիսի սոսկալի ոճիրներ գործել, որոնք այս օր ամբողջ քաղաքակրթւած աշխարը սարսափի մէջ են գցել և որոնց «գաղանութիւններ» անունն են տւել, կարծես կամենալով ասել, այդ էակները նոյն վալրենի գաղաններն են մարդու դիմակով:

Այս այն օրէնքն է, որը բացառում է մեղ, թէ ինչի կրթւած, լաւ մարդկանց խումբը երբեք ընդունակ չէ թուրքերի ու քուրդերի նման ոճիրներ գործել: «Լաւ մարդկանց ամբոխը, ասում է Սիգիլէն, թէ և կարող է վատ ճանապարհով դնալ, բաց երբեք չի հասնի այն աստիճան անպիտանութեան, որին կը հասնի վատ մարդկանց հաւաքումն»:

ինչի?

Որովհետեւ լաւ կոչւած մարդը, ալսինքն կրթւած, քարոզական, խղճով մարդու մէջ խիղճը և քարոզականութիւնը ալսքան արմատացած են, որ երբէք բոլորովին չեն անհետանում հիւսնուի դրութեան մէջ անգամ և, թէև նւազած, բաւց դարձեալ սանձում են մարդու բնածին գաղանթիւնը: Եթէ ալսալիսի մարդկանցից կազմւած ամբոխը մի որ և է պատճառով լուզման էլ հասնի ու պատրաստ լինի ոճիրներ գործելու, աչդ կը լինի մի արեւստական լուզմունք, և աչդ ամբոխին հեշտ է կանգնեցնել: Այս կարելի է նկատել եւրոպական մեծ քաղաքներում, ինչպէս Պարիզում, Լոնդոնում, որտեղ ժողովները, միտինգները առօրեայ երևութներ են, և որտեղ ալեկոծւած ամբոխը հանդարտուած է մի խեղացի խօսքով, ամոզմունքով...

Գռեհիկ վալրենի ամբոխը անսանձ է, արդար ու մեղաւորը, ճշմարիտ ու սուտը նրա համար միևնույն է: Եթէ նրա միջից դուրս գալ մէկը, որը ցոյց տալ ամբոխին նրա անարդարութիւնը, նրա սխալը, — նա ամբոխի աչքին դաւաճան կը դառնալ:

Գռեհիկ ամբոխը կը զիջանի միայն գռեհիկ ուժի դէմ. նրա գաղանթիւններին սահման չկալ, եթէ նա երկրիւղ չունի իշխանութիւնից, կամ իր հակառակորդից. երբ մի խումբ անքարոզական մարդիկ զգան, որ ուժը իրանց կողմն է, նրանց կատաղութիւնը անսանձ է:

Ամբոխալին հոգեբանութիւնը առ ալժամ աչս կէտերն է միայն որոշել: Նա խոստանում է մօտ ապագայում շատ կոնկրետ հասարակական խնդիրներ պարզել ու լուծար պիտական փորձումները վերածել հասարակութեան քարոզ կեանքը:

Յ Ա Ն Կ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՍ

	Էջ.
Յառաջաբան,	5
Գլուխ Ա. Ինչ է հիպնոտիզմը.	9
» Բ. Հիպնոտիզմի քննարկումը.	25
» Գ. Ներշնչումն.	54
» Դ. Պարիզի և Նանտիի գաղութները.	78
» Ե. Փոքր հիպնոտիզմ կամ ֆուլչուրիզմ.	86
» Զ. Ամփոփումն.	106

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՍ

Գլուխ Ա. Հիպնոտիզմը պատմութեան մէջ, Հնագուրեան դաւանութիւնները, Գիւանականութեան և ոքսանչացման պատմութիւնը.	4
» Բ. Էնդորինական օրէնքները.	56
» Գ. Ամբոխի հոգեբանութիւնը.	72

THE
LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY
AND
ZOOLOGY
OF THE
CITY OF LONDON
IN THE
MUSEUM BUILDINGS
LONDON
W.C.2

1025

2013

0025313

ՀՀ Ազգային գրադարան



NL0025313

